

Ճանաչի՛ր ինքդ քեզ

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 28.07.2021թ. չորեքշաբթի թիվ 30-31 (1003-1004)

## Օլիմպոս

**Օլիմպոսը** Հունաստանի ամենաբարձր լեռնազանգվածն է՝ **2917** մ: Հին հունական դիցաբանության մեջ այն ընկալված է որպես սրբազան լեռ, որի վրա ապրում էին աստվածները (չաստվածները):

**Արարատը** Հայաստանի ամենաբարձր լեռնազանգվածն է՝ **5165** մ: Ըստ **Աստվածաշնչի**, բազմաթիվ գիտական վարկածների եւ հայկական ավանդության՝ աշխարհի սրբազան լեռը, որի վրա կանգ առավ **Նոյյան տապանը**:

Հին հույները շուրջ 1200 տարի, առաջինը՝ **մ.թ.ա. 776թ.**, վերջինը՝ **մ.թ. 394թ.**, կարողացան կազմակերպել *օլիմպիական մարզախաղեր*՝ որպես իրենց *չաստվածներին* նվիրված տոնախմբությունների մաս:

Հին հայերը, թերեւս նաեւ նույն այդ ժամանակամիջոցում, *Նավասարդյան խաղեր* էին կազմակերպում՝ որպես *Ամանորին* նվիրված տոնախմբությունների մաս:

Ոչ հույների ջանքերով, բայց 1896 թվականին Օլիմպիական խաղերը վերականգնվեցին որպես համաշխարհային մարզական ամենապատվավոր ստուգատես: Հայերս համահայկական խաղեր անգամ կազմակերպելով՝ մոռացանք դրանք անվանել *Նավասարդյան*, եթե ոչ՝ *Արարատյան*:

Օլիմպոսի վրա ապրում էին *չաստվածները*: Մենք *չաստվածներ* ունեցանք մեր պատմության հելլենիստական դարաշրջանում (հիշենք **Խորենացուն**): Իսկ դրանից առա՞ջ: Հնարովի ուրարտակա՞ն, թե՞ խեթական, արամեակա՞ն, թե՞ խուռիական չաստվածներին պիտի որդեգրեինք իբրեւ հայ *հին աստվածներ*... Մոռանալով, որ **Քրիստոնեությունն առաջինն աշխարհում դեռ Հիսուսի կենդանության օրոք ընդունած եւ 301-ին առաջինը պետական կրոն հռչակած մեր ժողովուրդը չաստվածներ չի ունեցել ընդհանրապես**: Ինչպե՞ս կարող էր **Այր (Ադամ) - Նոյ** ժառանգական շղթան, **Հաբեթ - Թորգոմ - Հայկ -...** ուղիղ գծով սերնդեսերունդ բազմանալով եւ **Հայկական լեռնաշխարհում *շարունակական քաղաքակրթություն*** ստեղծելով, ունենալ աշխարհի ստեղծման *հնարովի* պատմություն (ընդգծենք՝ հայերը, թերեւս, աշխարհի միակ հնագույն ժողովուրդն են, որ չունեն աշխարհի ստեղծման մասին *առասպել*) կամ *հնարովի* աստվածներ (վերջիններս գրաբարյան գրական ժառանգության մեջ սովորաբար նշվում են **չ** նախդիրով): Հայերն իրենց հիշողության մեջ մշտապես պահեցին **Հայր Աստծո**, *Տիեզերքի* եւ *Մարդու* ստեղծիչ **Միակ Աստծո** գաղափարը եւ եղան ***միաստված*** ի սկզբանե... **Իրականում մենք հեթանոս չենք եղել մեր պատմության եւ ո՛չ մի ժամանակահատվածում**: Առավելագույնը՝ որպես **Հայր Աստծո** *խորհրդանիշ* ենք ընկալել *արեւը* եւ մեզ հորջորջել *արեւորդիներ*: **Եթե իրականությունն ուղղակիորեն է առնչվում քեզ, բնականաբար, առասպելականը դուրս է մղվում քո մտավոր դաշտից...**

Վերադառնանք:

***Ամառային օլիմպիական 32-րդ խաղերը*** *Տոկիոյում մեկնարկեցին* ***հուլիսի 23-ին****: Հայաստանի օլիմպիական թիմը մասնակցում է* ***17*** *մարզիկով...*

**Արարատ ունեցողի համար ի՛նչ մի դժվար բան է Օլիմպոսը նվաճելը...** Հուսա՛նք: Հավատա՛նք: Կրկնե՛նք՝ **ավելի՛ արագ, ավելի՛ բարձր, ավելի՛ ուժեղ...**

***Գ. Մ.***









## ՀՀ ԿԳՄՍ նախարարի պաշտոնակատար Վահրամ ԴՈՒՄԱՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի մեկնարկի կապակցությամբ



Սիրելի՛ մարզիկներ,
մարզաշխարհի ներկայացուցիչներ,

Շնորհավորում եմ բոլորիս՝ 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի մեկնարկի կապակցությամբ: Մարզաշխարհի այդ կարեւորագույն իրադարձությանը պատրաստվում էինք դեռեւս անցյալ տարի, սակայն համավարակը, ի թիվս այլ իրադարձությունների, կանխեց այս միջոցառումը եւս:

Վերջին մեկ տարում մեզ պատուհասած համավարակն ու պատերազմը, ավելի քան երբեւէ, մղում են մեզ միասնականության ու նոր հաղթանակների կերտման:

Սիրելի՛ մարզիկներ, դուք ուժեղագույնն եք, դուք հաղթական ոգու կրողներն եք: Թող մրցահարթակում ձեզ չկաշկանդի հաղթանակի պարտադրանքը, թող ձեր մրցելույթները լինեն մարզաձեւին բնորոշ գեղեցկությամբ եւ մարզիկներին հատուկ ներքին ազատությամբ. սրանք են դեպի հաղթանակ տանող ճանապարհները:

Մեր 17 մարզիկներից ոմանք առաջին անգամ են մասնակցում Օլիմպիական խաղերին, իսկ ոմանք փորձառու են. երկու դեպքում էլ թող հաստատակամությունն ու վճռականությունն ուղեկցեն ձեզ դեպի օլիմպիական բարձունք:

Մեկ անգամ չէ, որ հայկական դրոշը ծածանվել է՝ ի պատիվ հաղթանակի, մեկ անգամ չէ, որ մեր մարզիկների անունները հնչել են որպես հաղթանակածի. վստահ եմ՝ 32-րդ ամառային Օլիմպիական խաղերը՝ որպես մարզաշխարհում հաղթանակների նվաճման գագաթ, Հայաստանի Հանրապետության դրոշը հպարտորեն բարձրացնելու, օրհներգը հնչեցնելու եւս մեկ առիթ է:

Մեր մարզիկներին մաղթում եմ ոգու ամրություն, գեղեցիկ ելույթներ եւ օլիմպիական բարձունքի նվաճում. ձեր հաղթանակը Հայաստանի Հանրապետության հաղթանակն է:


*Այս համարում*

● *Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 եւ 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանները՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 20.07.2021 թ. N54-Ն հրամանի հավելվածի*

***տե՛ս՝ էջ 7-18***

Վերապատրաստում

## Փոփոխվել է պայմանագրի ձեւաչափը

ՀՀ կառավարության վերջին նիստում հավանության է արժանացել *«Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգում»* փոփոխություն եւ լրացում կատարելու մասին որոշման նախագիծը: Ըստ այդմ՝ նախկինում ուսուցչի, ուսումնական հաստատության եւ վերապատրաստող կազմակերպության միջեւ կնքվող եռակողմ պայմանագիրը փոխարինվել է երկկողմ պայմանագրի ձեւաչափով՝ այն թողնելով ուսումնական հաստատության եւ վերապատրաստող կազմակերպության միջեւ: Այս փոփոխությունը բխում է գործընթացի ֆինանսավորման մեխանիզմի ձեւաչափից, ինչպես նաեւ պայմանագրի կնքման ընթացքն ավելի դյուրին դարձնելու եւ փաստաթղթային լրացուցիչ աշխատանքից ուսումնական հաստատություններին ազատելու նկատառումներից:

Եռակողմ պայմանագիր կնքելու դեպքում ուսումնական հաստատության ուսուցիչների՝ օրենքով սահմանված 20 տոկոսի վերապատրաստման ընթացակարգը կազմակերպելիս հաստատությունը վերապատրաստող կազմակերպության հետ ուսուցիչների թվով պայմանագրեր է կնքում, որն ավելորդ եւ ժամանակատար աշխատանք է: Բացի դրանից՝ ուսուցչին եռակողմ պայմանագրում ներառելը որեւէ նպատակ չի հետապնդում, ուստի պայմանագրից ուսուցչին դուրս թողնելը որեւէ հետեւանք չի կարող ունենալ:

Ավելին՝ ատեստավորման համար նախատեսված ֆինանսավորումը տրվելու է մարզպետարաններին, որոնք էլ իրականացնելու են բաշխումը ուսումնական հաստատություններին, եւ ուսուցիչը որեւէ առնչություն չի ունենալու այդ հարաբերությունների կարգավորման հարցում, հետեւաբար, եռակողմ պայմանագրի կնքումը դառնում է ինքնանպատակ:

Այսպիսով՝ որոշման ընդունման արդյունքում վերապատրաստող կազմակերպության եւ ուսումնական հաստատության միջեւ երկկողմ պայմանագիր կնքելը եւ այդ գործընթացում երրորդ կողմին՝ ուսուցչին, չներառելը հնարավորություն կընձեռի վերապատրաստման նախապատրաստական աշխատանքներն ավելի արագ, արդյունավետ եւ հեշտ իրականացնել, քանի որ ուսումնական հաստատության ուսուցիչները հնարավոր է՝ ընտրում են միանգամայն տարբեր կազմակերպություններ, որոնց հետ առանձին պետք է կնքվեն պայմանագրեր, իսկ այդ գործառույթը որեւէ նպատակ չի հետապնդում: Արդյունքում՝ ուսուցչին որպես կնքվող պայմանագրի կողմ չներառելը նրան կազատի լրացուցիչ աշխատանքից, ինչպես նաեւ հնարավոր կլինի առանց ավելորդ գործողությունների ֆինանսավորման մեխանիզմը կիրառել՝ մարզպետարանների միջոցով այն տրամադրելով ուսումնական հաստատություններին:

Միայն ուսումնական հաստատության եւ վերապատրաստող կազմակերպության միջեւ կնքվող պայմանագիրը բավարար հիմք է գործընթացն իրականացնելու համար:

***Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Կառավարությունում

# Հաստատվել է ՀՀ ֆինանսական կրթման ծրագիրը

**ՀՀ կառավարության նիստում գործադիրը հավանության է արժանացրել ՀՀ ֆինանսական կրթման ծրագրի եւ 2021-2025 թվականների գործողությունների պլանի նախագիծը:** Որոշման ընդունումը պայմանավորված է յուրաքանչյուր հինգ տարին մեկ այն վերանայելու անհրաժեշտությամբ, դա ամրագրված է 2014 թվականին Կառավարության նիստի արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարությամբ:

Ակնկալվում է, որ փաստաթղթի ընդունումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում բնակվող անձանց բարեկեցության աճին՝ օգնելով նրանց ստանալ գիտելիքներ, հմտություններ, ձեւավորել պատասխանատու վերաբերմունք եւ վարքագիծ:

### Նախագծի պատմություն

Հիմք ընդունելով 2012 թվականին Համաշխարհային բանկի իրականացրած Հայաստանի բնակչության Ֆինանսական ունակությունների գնահատման հարցման ցածր արդյունքները եւ հաշվի առնելով բնակչության ֆինանսական ունակությունների զարգացման կարեւորությունը՝ 2012 թվականին Կենտրոնական բանկը ձեւավորել է ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարության մշակման եւ իրագործման հանձնաժողով: Վերջինս մշակել է ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունը եւ 2014-2019 թվականների գործողությունների ծրագիրը:

2014-2019 թթ. ընթացքում ՀՀ ֆինանսական կրթման ռազմավարության ներքո տարբեր պետական, մասնավոր եւ հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ իրականացվել են ֆինանսական կրթման մի շարք ծրագրեր դպրոցականների, ուսանողների, գյուղաբնակների, զինվորականների եւ լայն հանրության համար:

2019 թվականին Կենտրոնական բանկն իրականացրել է *«Հայաստանի բնակչության ֆինանսական ունակությունների գնահատում»* հետազոտությունը, որի արդյունքների հիման վրա 2020 թվականին վերոնշյալ հանձնաժողովը մշակել է Ֆինանսական կրթման ծրագիրը եւ 2021-2025 թվականների գործողությունների նոր պլանը: ՀՀ ֆինանսական կրթման ծրագրով (2021-2025 թվականների) ամփոփվում է Ֆինանսական կրթման ազգային ծրագրի իրագործման առաջին փուլի (2014-2019 թվականներ) ընթացքում գրանցած առաջընթացը, ինչպես նաեւ նախագծվում են 2021-25 թվականների տեսլականը եւ գործողությունների պլանը: Փաստաթղթում սահմանվում են ֆինանսական կրթության առաքելությունը, նպատակները, նպատակային ցուցանիշները, խնդիրները, ուղղորդող սկզբունքները, թիրախային խմբերը եւ դրանց ուղղված ծրագրերը, ծրագրերի արդյունավետության գնահատման եւ ֆինանսավորման մոտեցումները:

Ֆինանսական կրթման ազգային ռազմավարությամբ սահմանված նպատակներն են՝ անձնական եւ ընտանեկան բյուջեի արդյունավետ կառավարում, խնայողությունների կատարում եւ երկարաժամկետ պլանավորում, վարկերի եւ պարտքերի արդյունավետ կառավարում, ֆինանսական ծառայություններից օգտվելիս սեփական իրավունքների պաշտպանություն, ֆինանսական գործիքների անվտանգ օգտագործում (այդ թվում՝ ֆինանսական զեղծարարություններից եւ խարդախություններից խուսափում), ինչպես նաեւ հիմնական ֆինանսական հասկացությունների իմացություն եւ դրանց արդյունավետ կիրառում՝ անձնական ֆինանսները կառավարելիս:

### *«Ֆինանսական կրթությունը դպրոցում»* ծրագիր (2014-2019 թթ.)

*«Ֆինանսական կրթությունը դպրոցում»* ծրագիրը գործարկվել է 2014 թ.-ին՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության եւ ՀՀ ԿԲ-ի միջեւ համագործակցության արդյունքում: Ծրագրի նպատակն էր ապահովել ֆինանսական կրթություն ոչ միայն աշակերտների, այլեւ նրանց ընտանիքների անդամների համար: Ֆինանսական կրթության թեմաները ներառվել են տարրական, միջին եւ ավագ դպրոցների չորս առարկաներում՝ *«Մաթեմատիկա»*, *«Ես եւ շրջակա աշխարհը»*, *«Հանրահաշիվ»* եւ *«Հասարակագիտություն»*: Մշակվել եւ հաստատվել են կրթական չափորոշիչներ, ծրագրեր ու այլ ուսումնական եւ ուսումնաօժանդակ նյութեր: 2017-2018 ուսումնական տարում պիլոտային ծրագիրն իրականացվել է 14 դպրոցներում: Ծրագրի արդյունավետությունը գնահատվել է ֆոկուս խմբերի միջոցով՝ ցույց տալով ծրագրի դրական ազդեցությունը: Այդ արձագանքի հիման վրա 2018-2019 ուսումնական տարում մեկնարկել է ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը: 2019 թ. դեկտեմբերի դրությամբ՝ ֆինանսական կրթություն է իրականացվել 685 դպրոցում՝ ընդգրկելով հանրակրթական ուսհաստատությունների շուրջ 50%-ը: Ընդհանուր առմամբ՝ 220,000 աշակերտ ստացել է ֆինանսական կրթություն, իսկ 4,951 ուսուցիչ՝ վերապատրաստվել:

### Ուսանողերին ֆինանսական կրթության տրամադրում (2014-2019 թթ.)

ՀՀ ԿԲ-ն համագործակցել է համալսարանների հետ՝ ապահովելու ուսանողներին ֆինանսական կրթության տրամադրումը: Օրինակ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանն ունի *«Անձնական ֆինանսների ներածություն»* դասընթաց: ԿԲ-ն վերապատրաստել է Հայկական պետական մանկավարժական համալսարանի մի շարք դասախոսների՝ այդպիսով հնարավորություն տալով նրանց ապահովել իրենց ուսանողների ֆինանսական կրթությունը: *«Իմ ֆինանսների ամիս»* եւ *«Փողի միջազգային շաբաթ»* ծրագրերի բազմաթիվ միջոցառումներ հիմնականում *«Իմ ֆինանսների ամիս»* ծրագրի միջոցառումների շարքը ներառել է ֆինանսական բանավեճեր՝ Եվրոպական երիտասարդական պառլամենտի հետ համագործակցությամբ, ֆինանսական թեմաներով ինտելեկտուալ առաջնություն՝ *«Հայ գիտնականների ասոցիացիայի»* հետ համագործակցությամբ եւ այլն:

### 2021-2025 թթ. գործողությունների ծրագիր

2021-2025 թթ. գործողությունների ծրագրի թիրախային խմբերն են աշակերտները, ուսանողները, գյուղական համայնքները, կանայք եւ ընտանիքները, միգրանտներն ու աշխատողները: Գործողությունների պլանը մշակելիս հաշվի են առնվել նախորդ ժամանակահատվածի ընթացքում քաղված դասերը եւ բազմակողմանի քննարկումները: *«Ֆինանսական կրթությունը դպրոցում»* ծրագիրը նախատեսվում է ընդլայնել՝ մինչեւ 2022-2023 ուսումնական տարին ընդգրկելով հանրապետության բոլոր դպրոցները եւ 4 առարկաների ուսուցիչներին: Դպրոցներում ֆինանսական կրթությունն արդյունավետ իրականացնելու նպատակով *«Մաթեմատիկա»*, *«Ես եւ շրջակա աշխարհը»*, *«Հանրահաշիվ»* եւ *«Հասարակագիտություն»* առարկաները դասավանդող այն ուսուցիչները, ովքեր դեռեւս վերապատրաստում չեն անցել, մինչեւ 2022-2023 ուսումնական տարվա վերջ կվերապատրաստվեն: ԿԲ-ն կհամագործակցի Մանկավարժական համալսարանի հետ՝ կազմակերպելու ֆինանսական կրթություն մատուցելու վերապատրաստում այն ուսանողների համար, ովքեր ցանկանում են դառնալ վերոնշյալ առարկաների ուսուցիչ: ԿԲ-ն կփոխգործակցի նաեւ այլ բուհերի հետ, որոնք իրականացնում են վերոնշյալ առարկաների ուսուցիչների ուսուցում:

Բացի դրանից՝ ԿԲ-ն կաջակցի ընթացիկ նախաձեռնությունների իրականացման շարունակականությանը եւ կօժանդակի մի շարք բուհերի՝ ուսանողներին ֆինանսական կրթություն տրամադրելու համար: *«Իմ ֆինանսների ամիս»* եւ *«Փողի միջազգային շաբաթ»* ամենամյա ծրագրերը կշարունակեն ընդգրկել հիմնականում ուսանողներին ուղղված բազմազան մրցույթներ ու միջոցառումներ:

***ՀԵղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

## Մեկնարկել է շուրջ 7500 ուսուցիչների վերապատրաստման գործընթացը

ՀՀ դպրոցների շուրջ 7500 ուսուցիչների համար՝ ներառյալ Տավուշի մարզի դպրոցները, մեկնարկել են տեղեկատվական եռօրյա առցանց սեմինարներ, որոնք իրականացվում են *«Կրթության բարելավում»* վարկային ծրագրի շրջանակում:

Սեմինարների նպատակն է ուսուցիչներին իրազեկել այն նոր փոփոխությունների մասին, որոնք վեց ուսումնական ոլորտների մասով տեղ են գտել վերանայված հանրակրթության պետական չափորոշչում, ինչպես նաեւ առարկայական չափորոշիչներում ու ծրագրերում: Այդ ոլորտներն են՝ *«Հայոց լեզու, գրականություն»*, *«Օտար լեզուներ»*, *«Հասարակություն, հասարակական գիտություններ»*, *«Արվեստ»*, *«Տեխնոլոգիա»* ու *«Ֆիզիկական կրթություն եւ անվտանգ կենսագործունեություն»*:

Սեմինարներն իրականացնում են առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը վերանայած աշխատանքային խմբերի 32 փորձագետներ, ինչպես նաեւ փորձարկող դպրոցներից ընտրված ու վերապատրաստում անցած 23 ուսուցիչներ:

Սեմինարների առանցքում փորձագետների մշակած վերապատրաստման մոդուլներն են, որոնք ներառում են հետեւյալ թեմաները՝ հանրակրթության պետական չափորոշիչ, փոփոխություններ առարկայական չափորոշիչներում եւ ծրագրերում, սովորողների ուսումնառության վերջնարդյունքները եւ կարողունակությունները, դասավանդման մեթոդաբանություն. բովանդակությունը մատուցելու լավագույն եղանակները՝ ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառական ծրագրերը, նախագծային ուսուցում, միջառարկայական կապեր՝ այլ առարկաների հետ հարաբերվող միասնական դասավանդում, գնահատում, սովորողների կարողունակությունների զարգացում, գնահատումների հիման վրա ուսումնական ծրագրի կատարելագործում եւ այլն:

***Հ. Հ.***

Առցանց հարթակ

# Վասն երիտասարդ գիտնականների եւ հնարավոր ղեկավարների համագործակցության

Gitak.club-ը համագործակցային առցանց հարթակ է, որը նպատակ ունի միավորել աշխարհի տարբեր ծայրերում աշխատող ղեկավարներին (համալսարանական գիտաշխատողներին կամ տնտեսության տարբեր ճյուղերում աշխատող մասնագետներին) եւ ուսանողներին՝ տարբեր նախագծերի վրա աշխատելու համար:

Ինչպե՞ս է աշխատում հարթակը, ի՞նչ նպատակ է այն հետապնդում, ովքե՞ր են հարթակի նախաձեռնողները եւ շահառուները. այս հարցերի շուրջ զրուցել ենք Gitak.club-ի նախաձեռնող եւ համահիմնադիր **Հայկ Սարիբեկյանի** հետ:

Հայկը ներկայում Քեմբրիջի համալսարանի ասպիրանտ է, մասնագիտությամբ մաթեմատիկոս, որն իր բակալավրիական կրթությունը ստացել է ԱՄՆ-ում: Հարթակի մյուս համահիմնադիր **Հրանտ Խաչատրյանը** ղեկավարում է *«Երեւանէն»* լաբորատորիան, որը զբաղվում է մեքենայական ուսուցման հետազոտություններով, իսկ **Արեգ Գեւորգյանը** ISTC ինովացիոն կենտրոնի տնօրենն է:

*«Gitak.club նախագիծ ունենալու միտքն առաջացել է դեռեւս 4-5 տարի առաջ, երբ ինքս բակալավրիատի ուսանող էի եւ ներգրավված էի համալսարանի գիտական խմբի աշխատանքներում: Նման փորձ ուսանողական տարիներին ունեցել է նաեւ Խաչատրյան Հրանտը: Հետեւաբար հասկացանք, որ նման հարթակի կարիք կա Հայաստանում, որպեսզի ուսանողներին խրախուսենք գիտական գործընթացի մեջ ներգրավվել ավելի վաղ տարիքից եւ հասկանալ՝ արդյոք ուզում են գիտությամբ զբաղվել, թե՝ ոչ, եւ ապագայում ավելի մտածված որոշումներ կայացնել, օրինակ՝ ասպիրանտուրայի հարցում: Այս ամենի շնորհիվ հնարավոր կլինի զարգացնել գիտական մշակույթն ու գիտական հարաբերությունները՝ ինչպես շփվել գիտնականների հետ, ինչպես կարդալ եւ վերլուծել բարդ, գիտական տեքստեր, որը գրեթե բացակայում է Հայաստանի համալսարանական կյանքում»*,- ասում է մեր զրուցակիցը՝ վստահեցնելով, որ շատ ուսանողներ բակալավրիատի ընթացքում անգամ գիտական հոդված չեն կարդում, այդ պատճառով նրանց անհրաժեշտ է խրախուսել, որն էլ իր հերթին ավելի երկար տարիների կտրվածքով կբերի նոր սերնդի՝ ավելի վաղ գիտական զարգացման:

Գիտական հենքը դնելու հնարավորություն, ըստ Հայկի, պետք է լինի բակալավրիական աստիճանից. ավելին, շատ հայտնի գիտնականներ իրենց ճանապարհը սկսել են անգամ դպրոցից: Gitak.club-ի համահիմնադիրն ասում է, որ նախաձեռնության շնորհիվ աշխարհի ցանկացած կետում գտնվող մասնագետ, որը պատրաստ է Հայաստանում ղեկավարել հետազոտական աշխատանքներ եւ ուսանողներին փոխանցել իր փորձը, Gitak.club կայքում գրանցում է իր նախագիծը, որն անմիջապես հասանելի է դառնում ուսանողներին: *«Այսինքն՝ ղեկավարն առաջարկում է նախագիծ, որի թեմաների սահմանափակում չկա: Հաջորդիվ՝ ուսանողները, ուսումնասիրելով նախագծերը, դիմում են դրանցից մեկին՝ նշելով, թե ինչու են բավարարում պահանջվող պայմաններին: Այնուհետեւ ղեկավարներն ուսումնասիրում են դիմումները, կապվում ուսանողների հետ եւ ընտրում մեկ կամ ավելի դիմորդների՝ կախված իրենց նախագծի ծավալից»*,- մեզ հետ զրույցում նշում է նա:

Հայկը վստահեցնում է՝ Gitak.club-ին միանալու դեպքում ուսանողական աշխատանքները կարող են գտնել նախագծեր այնպիսի ոլորտներում, որոնցով մեր համալսարաններում չեն զբաղվում: Մասնավորապես, կան հաշվողական նախագծեր, որոնց կիրառությունը նախեւառաջ կենսաբանության կամ ֆիզիկայի բնագավառում է: Այս նախագծերի շնորհիվ ուսանողները կարող են ավելի լավ պատկերացնել տարբեր ոլորտների կապերը,




տեսնել, թե ինչպես են իրենց տեսական եւ ծրագրավորման գիտելիքները կիրառվում: Այսպիսով, հարթակը ուսանողների համար կարող է ծառայել նաեւ որպես մոտիվացիայի աղբյուր, ցույց տալ իրենց սովորած գիտելիքների կիրառությունը:

*«Պետք է նշել, որ դիպլոմային եւ կուրսային աշխատանքների նպատակը հենց նշված խնդիրների լուծումն է: Սակայն Հայաստանում քիչ են այն գիտական ղեկավարները, որոնք կարող են արդիական նախագծեր առաջարկել, տաղանդավոր երիտասարդներին գրավել դեպի գիտություն: Այդ ղեկավարները ստիպված բավականին շատ ուսանողներ են ղեկավարում, որի արդյունքում ղեկավարելու ամենակարեւոր մասը՝ անձնական շփումը տուժում է: Մեր հարթակը փորձում է այդ բացը լրացնել: Բացի դրանից, կարծում եմ, ուսանողների գիտական աշխատանքները պետք է սահմանափակված չլինեն ակադեմիական կիսամյակներով: Gitak.club-ի միջոցով ուսանողները կարող են գտնել հետաքրքիր նախագծեր տարվա ցանկացած ժամանակ: Օրինակ՝ մենք խրախուսում ենք, որ ուսանողները գտնեն նախագծեր եւ աշխատեն դրանց վրա ամռանը՝ քննություններից հետո, եւ մեկ տարի հետո դրանք ձեւափոխեն դիպլոմային աշխատանքի»*,- նշում է մեր զրուցակիցը:

Հարթակի մեկնարկից ի վեր՝ որպես ղեկավար դրան միացել են Հայաստանի եւ աշխարհի առաջատար համալսարանների մի շարք գիտաշխատողներ եւ նորարարական ընկերությունների մասնագետներ: Ղեկավարները հիմնականում ՀՀ-ից չեն, արտերկրում են ապրում, սակայն նրանց մեծ մասը հայ է: 2020 թվականի դեկտեմբերից գործող հարթակն արդեն ունի հաստատված նախագծեր տարբեր ոլորտներից, ինչպիսիք են՝ տվյալագիտությունը, արհեստական բանականությունը, գենոմիկան, նյարդալեզվաբանությունը, տնտեսագիտությունը եւ այլն: Հարթակի գործարկումից կարճ ժամանակ անց տասնյակ ուսանողներ արդեն գտել են նախագծեր եւ աշխատում են ղեկավարների հետ: Ներգրավված ուսանողների մի մասը չունի ավարտական աշխատանքի որեւէ պահանջ եւ աշխատում է զուտ հետաքրքրությունից դրդված եւ լրացուցիչ փորձ ու գիտելիքներ ձեռք բերելու համար:

*«Մինչ այժմ խոսեցինք ուսանողների մասին, սակայն պետք է նշել նաեւ ղեկավարներին: Ղեկավարները նույնպես պետք է լինեն Gitak.club-ի շահառու, այսինքն՝ ուսանողների հետ ընդհանուր աշխատանքը պետք է նաեւ նպաստի նրանց գիտական նպատակների առաջխաղացմանը: Իհարկե, հատկապես նախագծերի սկզբնական փուլում, ուսանողներին ավելի հաճախ է պետք օգնել եւ ուղղություն ցույց տալ, բայց ժամանակի ընթացքում դրա կարիքը քչանում է: Կարծում եմ՝ ղեկավարելը նաեւ լավ փորձ է հատկապես երիտասարդ ղեկավարների համար»*,- ասում է Հայկը:

Մեր զրուցակիցն ուրախությամբ փաստում է, որ նախագծին, որպես ղեկավար, միացել է **Արեգ Դանագուլյանը,** որը Մասաչուսեթսի Տեխնոլոգիական ինստիտուտի Միջուկային գիտության եւ ճարտարագիտության պրոֆեսոր է ու միջուկային անվտանգության ոլորտի առաջատար մասնագետներից է: *«Նա չի առաջարկում որեւէ կոնկրետ հետազոտական նախագիծ, փոխարենը՝ պատրաստ է աջակցել ուսանողներին հետեւյալ սկզբունքներով՝ քննարկել ներկայացված միտքը/գաղափարը/նախագիծը եւ օգնել խորհուրդներով, գրախոսել ուսանողի անգլերեն հոդվածները եւ աշխատանքի մասին խորհուրդներ տալ, ինչպես նաեւ խորհրդակցել՝ որպես երկրորդ գիտական ղեկավար»*,- շեշտում է Հայկը:

Ըստ մեր զրուցակցի՝ քանի որ ՀՀ-ում ուսանողները հաճախ գիտական հոդվածներ չեն կարդում եւ գիտական նյութերի հետ աշխատելու պրակտիկա չունեն, հարթակի հեղինակները ցանկանում են գիտական հմտությունների զարգացման վերաբերյալ դասախոսություններ կազմակերպել՝ ինչպես աշխատել նյութի հետ, վերլուծություն անել եւ այլն: *«Gitak.club-ում կարեւորում ենք եւ խրախուսում ուսանողական աշխատանքների շրջանակում գիտական հոդվածներ կարդալու եւ ներկայացնելու հմտությունների ձեւավորումը: Հույս ունենք, որ դրա արդյունքում կունենանք մեծ քանակությամբ նախագծեր, որոնք ոչ միայն գիտական արդյունք կտան, այլ նաեւ այդ արդյունքները կիրապարակվեն: Բացի այդ, մտածում ենք կազմակերպել ուսանողական համաժողով, որի ընթացքում սովորողները կներկայացնեն իրենց նախագծերի արդյունքները: Համաժողովին կարող են մասնակցել նաեւ գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներ՝ ծանոթանալու այդ արդյունքներին: Կարծում ենք, որ սա հավելյալ մոտիվացիա կհանդիսանա ուսանողների համար»*,- շեշտում է Հայկը՝ հույս հայտնելով, որ ավելի հեռանկարում Gitak.club-ի շուրջ կստեղծվի գիտական-ուսանողական համայնք, որն իրեն կապահովի նոր նախագծերով:

*«Կարծում եմ, որ Gitak.club-ի նման նախագծերը Հայաստանի վերափոխվող գիտահետազոտական էկոհամակարգի մի մասն են: Հայաստանն ապագայում ուժեղ եւ մրցունակ տեսնելու համար գիտության առաջխաղացմանը նպաստող նախաձեռնությունները բոլորիս աջակցությունը պետք է ստանան»*,- նշում է մեր զրուցակիցը՝ ուսանողներին եւ հետաքրքիր նախագծեր ունեցող ղեկավարներին հորդորելով միանալ Gitak.club-ին եւ այդ փոփոխությունների իրագործման մաս դառնալ:

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Բարի լուր

# Նվաճեցին եւս 5 մեդալ

**ՀՀ դպրոցականները 5 մեդալ են նվաճել *«Մաթեմատիկա»* առարկայի 62-րդ միջազգային օլիմպիադայում:**

Օլիմպիադան, որի կազմակերպիչ երկիրը Ռուսաստանի Դաշնությունն էր, երկու տեսական փուլերով եւ առցանց ձեւաչափով անցկացվել է հուլիսի 14-24-ը, Երեւանի Քվանտ վարժարանում: Օլիմպիադային մասնակցել են 107 երկրների 619 աշակերտներ՝ 556 տղաներ եւ 63 աղջիկներ: Հայաստանի թիմը ներկայացրել են 6 աշակերտներ՝ 5-ը Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցից, իսկ մեկը՝ Քվանտ վարժարանից: Ֆիզմաթ դպրոցի սաներ **Վահագն Հովհաննիսյանը** եւ **Միեր Կարագուլյանն** արժանացել են արծաթե, իսկ նույն ուսհաստատության աշակերտներ **Ռուբեն Համբարձումյանն** ու **Էրիկ Բաբասյանը,** ինչպես նաեւ Քվանտ վարժարանի սան **Լորետա Արզումանյանը**՝ բրոնզե մեդալների: Հայաստանի թիմը ղեկավարել են ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտի ավագ գիտաշխատող **Սմբատ Գոգյանը** եւ Ֆիզմաթ հատուկ դպրոցի ուսուցիչ **Գուրգեն Ասատրյանը:**

Հիշեցնենք, որ Մաթեմատիկայի 61-րդ միջազգային օլիմպիադայում եւս Հայաստանի թիմն արժանացել էր 2 արծաթե եւ 3 բրոնզե մեդալների:

**ԱՀ Մարտունու թիվ 1 միջնակարգ դպրոցի սան Գեւորգ Ավանեսյանը *«Կենսաբանություն»* առարկայի 32-րդ միջազգային օլիմպիադայում արժանացել է արծաթե մեդալի:**

Օլիմպիադան առցանց ձեւաչափով անցկացվել է հուլիսի 18-23-ը, Երեւանի թիվ 118 ավագ դպրոցում, որի կազմակերպիչ երկիրն էր՝ Պորտուգալիան: Փորձարարական եւ տեսական փուլերով կազմակերպված օլիմպիադային մասնակցել են 76 երկրների 304 աշակերտներ: Հայաստանի թիմը ներկայացրել են 4 աշակերտներ՝ ԱՀ Մարտունու թիվ 1 միջնակարգ դպրոցի սան **Գեւորգ Ավանեսյանը,** *«Հերացի»* ավագ դպրոցի աշակերտներ **Արման Հայրապետյանը** եւ **Վահե Գաբրիելյանը,** ինչպես նաեւ Հրազդանի թիվ 13 ավագ դպրոցի սան **Աստղիկ Հարությունյանը:** Հայաստանի թիմը ղեկավարել ենգ ԵՊՀ-ից՝ **Գայանե Ղուկասյանը, Սեդա Մարությանը** եւ **Եվա Սողոյանը,** ՀՊՄՀ-ից՝ **Սամվել Պիպոյանը,** իսկ ԵՊԲՀ-ից՝ **Արեն Պետրոսյանը** եւ **Միեր Կուրղինյանը:** Օլիմպիադայի փակման առցանց արարողության ժամանակ (**https://bit.ly/3ByDZPM**) Պորտուգալիայի թիմի կազմկոմիտեի ղեկավար-կոորդինատոր **Խոսե Անտոնիո Մաթոսը** վիրտուալ գավաթը փոխանցել է 2022 թվականին Հայաստանում անցկացվելիք Կենսաբանության 33-րդ միջազգային օլիմպիադայի Հայաստանի թիմի կոորդինատոր Գայանե Ղուկասյանին՝ այսպիսով ազդարարելով նախապատրաստական աշխատանքների մեկնարկը:

Նշենք, որ Կենսաբանության 31-րդ միջազգային օլիմպիադայում Հայաստանի թիմն արժանացել էր մեկ բրոնզե մեդալի (Միեր Կուրղինյան, *«Հերացի»* ավագ դպրոց):

Արցախ

## Բարի երթ



Օրերս լրագրողների հետ կայացած հանդիպման ժամանակ Արցախի հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Հասմիկ Մինասյանն** ամփոփել է բուհական ընդունելության քննաշրջանի արդյունքները:

Այս ուսումնական տարվա 667 շրջանավարտներից Արցախի պետական համալսարան է ընդունվել 228 դիմորդ, որոնցից 96-ը` անվճար ուսուցման համակարգում. նրանցից 7-ը` զոհված զինծառայողների երեխաներ, պահուստային տեղերի հաշվին:

Շուշիի տեխնոլոգիական համալսարան ընդունված 18 դիմորդից 11-ը կսովորեն անվճար, 7-ը` վճարովի համակարգում: *«Մեսրոպ Մաշտոց»* համալսարանը կունենա` 15, *«Գրիգոր Նարեկացի»* համալսարանը` 48, *«Գյուրջյան»* կիրառական արվեստի ինստիտուտը` 12 ուսանող:

Այս տարի ՀՀ բուհերի արցախցի դիմորդների թիվը 122 էր: Նրանցից 60-ը նպատակային տեղերում կսովորի անվճար, իսկ 32-ը` վճարովի համակարգում:

Գերատեսչության պատասխանատուի համոզմամբ` քննաշրջանն ընթացել է թափանցիկ եւ արդար` ամբողջությամբ արտացոլելով դիմորդների գիտելիքները:

Խոսելով վարձավճարների փոխհատուցման մասին` նախարարի տեղակալը նշեց, որ Արցախի հանրապետության նախագահի հանձնարարականով եւ պետնախարարի վերահսկողությամբ` կստեղծվի հանձնաժողով` բարձրագույն կրթության բարելավման ծրագրերի մշակման համար:

Այս տարի եւս կգործի բակալավրի առկա ուսուցման համակարգի վարձավճարների փոխհատուցման գործընթացը, իսկ մագիստրատուրայի կրթական ծրագրում այն չի գործելու, քանի որ ուսման տեւողությունը կարճ է եւ այն համարվում է երկրորդ մասնագիտություն` պարզաբանել է Հ. Մինասյանը:

Համեմատելով այս եւ նախորդ տարիների ցուցանիշները` ԱՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալն արդյունքները համարել է գոհացուցիչ: Անցած տարի դիմորդների ընդանուր թվի 64 տոկոսն է ընդունվել բուհեր, իսկ այս տարի` 77 տոկոսը:

*«Հաշվի առնելով պատերազմից հետո ստեղծված հոգեբանական ծանր իրավիճակը` շրջանավարտների ցուցաբերած արդյունքները կարելի է համարել հուսադրող»*,- ընդգծել է Հ. Մինասյանը: Նա իր խոսքն ամփոփել է քննաշրջանն հաջողությամբ ավարտածներին ուղղված շնորհավորանքով:

***Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ***
***ք. Ստեփանակերտ,***
***մեր սեփական թղթակից***

Մայր Աթոռ

# Պատմականորեն արժեքավոր եւ արդիական աշխատությունների շնորհանդես

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի *«Վաչե եւ Թամար Մանուկյան»* Մատենադարանում, բարձր նախագահությամբ **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ *«Եկեղեցին եւ սահմանադրական մշակույթը»* խորագրով շնորհանդես: Հընթացս շնորհանդեսի ներկայացվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչության կողմից լույս ընծայված *«Համաբարբառ Կանոնագիրք Հայոց»* ժողովածուն (կազմող` **Արամ Մարտիրոսյան,** պատասխանատու խմբագիր` **Տեր Շահե ծայրագույն վարդապետ Անանյան**) եւ *«Սահմանադրական մշակույթի արժեբանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում»* կոլեկտիվ մենագրությունը (Հեղինակներ` **Ազատ Բոզոյան, Ալեքսան Հակոբյան, Արթուր Վաղարշյան, Արման Եղիազարյան, Արտակ Մովսիսյան, Գագիկ Հարությունյան, Գրիգոր Թանանյան, Հարություն Մարության, Նարինե Միրզոյան**, պատասխանատու խմբագիրներ` **Գագիկ Հարությունյան, Արտակ Մովսիսյան, Տեր Արարատ քահանա Պողոսյան, Սարգիս Մելքոնյան**):

Շնորհանդեսի բացումն ազդարարեց Մայր Աթոռի Մատենադարանի եւ հրատարակչության տնօրեն Տեր Արարատ քահանա Պողոսյանը: Այնուհետեւ շնորհանդեսի մասնակիցներին իր հայրական օրհնությունն ու պատգամը փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Իր խոսքում Նորին Սրբությունը մասնավորապես նշեց.

*«Շնորհանդեսի սիրելի՛ մասնակիցներ,*

*Ողջունում ենք ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում` աստվածակառույց նվիրական սրբօրրանում մեր ժողովրդի:*

*Մատենադարանի այս լուսավոր հարկի ներքո համախմբվել ենք Մայր Աթոռում հրատարակված երկու արժեքավոր աշխատությունների` «Սահմանադրական մշակույթի արժեբանական սկզբունքները հայ ժողովրդի 1000-ամյա տարեգրության ծալքերում» եւ «Համաբարբառ կանոնագիրք հայոց» գրքերի շնորհանդեսի ուրախ առիթով, որի համար գոհություն ենք հայտնում Բարձրյալին: Խնամքով եւ նախանձախնդրությամբ ստեղծված այդ գրքերն այսօր դրված են մեր ժողովրդի սեղանին եւ հանձնված են հատկապես իրավունքի ու պատմության ոլորտի մասնագետների եւ հոգեւոր ու գիտակրթական լայն շրջանակների ուշադրությանը:*

*Գրքերի հեղինակները մեր Եկեղեցու արժանավոր զավակներ են, հայրենասեր եւ մեր երկրին ու ժողովրդին նվիրված անձինք, ովքեր հարուստ վաստակ ունեն գիտության եւ կրթության բնագավառներում` տարիներ ի վեր դասավանդելով տարբեր բարձրագույն հաստատություններում, նաեւ` Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: Ուրախ ենք, որ այսօր առիթն ունենք Հայրապետական Մեր օրհնությունը եւ գնահատանքի խոսքը բերելու ձեզ, մեծարգո հեղինակներ, ինչպես եւ` գրքերի հրատարակման գործում մասնակցություն բերած հոգեւորականներիդ ու աշխարհիկներիդ: Այս առիթով Մեր մասնավոր գնահատանքն ենք ցանկանում հայտնել մեծարգո տիար Գագիկ Հարությունյանին «Սահմանադրական մշակույթի արժեբանական սկզբունքները հայ ժողովրդի 1000-ամյա տարեգրության ծալքերում» գրքի նախաձեռնության եւ հրատարակության պատրաստման համար, ինչպես եւ մեծարգո տիար Արամ Մարտիրոսյանին «Համաբարբառ կանոնագիրք հայոց»-ի կազմության համար:*



*Սիրելինե՛ր, հրատարակված գրքերն իրենց պարունակով վառ վկայություններ են մեր ժողովրդի ստեղծագործ եւ առաջադեմ մտքի: Ծավալուն այս աշխատությունները ներկայացնում են հայ իրականության մեջ պատմության հնագույն ժամանակներից ձեւավորված օրենսդրական մշակույթը` խարսխված մեր ժողովրդի հոգեւոր եւ մտավոր ժառանգության, քրիստոնեական արժեքների ու ավանդույթների վրա: Ազգային-եկեղեցական մեր կյանքի կանոնակարգման պատմական փորձառությունը, իրավակարգավորման սկզբունքները այսօր պիտի օգնեն առավել ներդաշնակ կազմակերպելու եւ զորացնելու հոգեւոր եւ պետական մեր կյանքը, առավել դյուրընթաց դարձնելու օրենքի վրա խարսխված մեր հասարակական կյանքի բնականոն զարգացումը: Արդարեւ, իրավական պետությունը կարող է կառուցվել բարձր իրավագիտակցության հիմքի վրա, քանզի հանրային ճանաչողության առանցքը կազմող իրավական եւ արժեքային ըմբռնումներն են ձեւավորում հասարակական վարքագիծը:*

*Արդարությունը եւ իրավունքը աստվածադիր սկիզբ ունեն եւ Սուրբ Գրքի հիմնական սկզբունքներից են` սիրո, հույսի եւ հավատի հիմնարար արժեքների հետ: Արդարությունը եւ օրինահարգությունը մեր կյանքում պիտի ամուր մնան ինչպես սահմանված օրենքների պահանջով, այնպես եւ քրիստոնեական սիրո ոգով` նպաստելով հասարակության համախմբմանն ու միաբանությանը: Հանրության համերաշխությունը հաստատուն է արդարությամբ, իրավունքի եւ օրենքի անխտրական գործադրմամբ եւ վկայությունն է տերունապատվեր սիրո եւ հավատի դրսեւորման:*

*Այս արժեքների հիմքով ձեւավորվել են մեր Եկեղեցու Կանոնագիրքը, դատաստանագրքերը, որոնցով մեր ժողովուրդն առաջնորդվել է նաեւ պետականության բացակայության պայմաններում` պահպանելով իր հավաքականությունը, ինքնությունը եւ կազմակերպելով իր ազգային-եկեղեցական կյանքը: Թեմատիկ խմբավորմամբ հրատարակված Կանոնագրքի համաբարբառը, կարծում ենք, առաջին քայլն է մեր Եկեղեցու արդի պահանջները բավարարող նոր Կանոնագրքի կարեւոր գործի ձեռնարկման ճանապարհին: Ամբողջական եւ արդիական Կանոնագրքի ստեղծումն այսօր օրակարգային է Եկեղեցի-պետություն եւ Եկեղեցի-հասարակություն փոխհարաբերությունները ավանդական եւ ժամանակակից իրողությունների հիմքերի վրա զարգացնելու առումով:*



*Թող իրավագիտական բնույթի այսպիսի կարեւոր աշխատությունները հարստացնեն մեր ժողովրդի գիտակրթական անդաստանը` ամրապնդելով իրավունքի գերակայության գիտակցությունը ու մեր կյանքում արդարությունը եւ բարին հաստատելու նախանձախնդրությունը, քանզի, ինչպես սաղմոսերգուն է ասում` Աստված ,դատում է աշխարհն արդարութեամբ եւ իր ժողովրդին ուղղամտութեամբ» (Սղմ. 9. 9):*

*Հայցում ենք Երկնավորից քաջառողջություն եւ նոր արգասիքներ` գրքերի հեղինակներին: Աստծո օրհնությունը բոլորիդ եւ համայն մեր ժողովրդին. ամեն»:*

Աշխատությունների հրատարակության առիթով իր ողջույնի խոսքն ասաց ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ **Արման Դիլանյանը`** ընդգծելով կատարված աշխատանքի կարեւորությունը:

*«Սահմանադրական մշակույթի արժեբանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում»* կոլեկտիվ մենագրության վերաբերյալ բանախոսությամբ հանդես եկավ *«Սահմանադրական մշակույթ»* միջազգային վերլուծական կենտրոնի հոգաբարձուների նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գագիկ Հարությունյանը,** մասնավորապես խոսելով սահմանադրական մշակույթի ուսումնասիրման տեսլականի եւ հայոց իրավագիտական մտքի պատմական ժառանգության հանրահռչակման անհրաժեշտության մասին, նաեւ իր շնորհակալությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին` կարեւոր այս նախաձեռնության իրագործմանը սատարելու եւ այն հովանավորելու համար:

*«Համաբարբառ Կանոնագիրք Հայոց»* ժողովածուի ստեղծման, աշխատության կարեւորության եւ արդի կիրառելիության վերաբերյալ բանախոսությամբ հանդես եկավ իրավագիտության պատմության պրոֆեսոր **Արամ Մարտիրոսյանը** (Սորբոնի համալսարան): Համաբարբառի կազմման սկզբունքների եւ աշխատության պատրաստության գործում պրոֆեսոր Արամ Մարտիրոսյանի կարեւոր ներդրման մասին խոսեց նաեւ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու **Տեր Շահե ծայրագույն վարդապետ Անանյանը:**

Շնորհանդեսն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի *«Պահպանիչ»* աղոթքով, որին հաջորդեց ավանդական գինեձոնը:

Արմաթ

# Անօդաչու թռչող սարքերի լաբորատորիաներ

Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը 2011 թվականից իրականացնում է *«Արմաթ»* ինժեներական լաբորատորիաների ներդրման ծրագիրը՝ տեխնոլոգիական կրթության հայկական մոդելի գործընթացը արտահանելով նաեւ արտերկիր: 2020թ.-ի հունվար ամսվա դրությամբ՝ Հայաստանի, Արցախի եւ Վրաստանի տարածքում գործում են 575 *«Արմաթ»* ինժեներական լաբորատորիաներ, որտեղ շուրջ 15.000 երեխա ստանում է անվճար ինժեներական կրթություն:

Մեզ հետ զրույցում *«Արմաթ»* լաբորատորիայի խմբավար, մասնագիտությամբ ծրագրավորող Հայկը պատմում է, որ լաբորատորիաներում 10-18 տարեկան երեխաները ինտերակտիվ արտադասարանական դասընթացների, հետաքրքիր մրցույթների, ինովացիոն ճամբարների միջոցով ծանոթանում են գիտությանը, տեխնոլոգիային, ինժեներությանը եւ մաթեմաթիկային: *«Մեր երիտասարդ ինժեներներին հնարավորություն է տրվում մշակել, կառուցել, փորձարկել եւ բարելավել իրենց իսկ ստեղծած լուծումներն անվտանգ եւ ուրախ միջավայրում՝ ընթացքում ձեռք բերելով նոր ընկերներ եւ միասին հիմնելով ստարտափներ: Նրանք անվճար սովորում են ծրագրավորում, 3D մոդելավորում, ռոբոտաշինություն, ինչպես նաեւ աշխատում են էլեկտրոնիկայի հետ, խաղեր պատրաստում»*,- ասում է Հայկը եւ հավելում, որ ԱՏՁՄ-ն որոշել է ընդլայնել իր նախագծերը եւ հիմնել *«Արմաթն օդում»* անօդաչու թռչող սարքերի առանձին լաբորատորիա՝ 15-17 տարեկանների համար: *«Որպես ժամկետային զինծառայող մասնակցել եմ 2016-ի ապրիլյան պատերազմին, իսկ 2020-ի Արցախյան գոյամարտին գնացել եմ ռազմաճակատ՝ որպես կամավոր: Ուզում եմ շեշտել՝ դեռեւս 2016-ին պարզ էր, որ պետք է համակարգն ամբողջությամբ փոխվի, քանի որ ժամանակակից պատերազմներում կարեւորվում են անօդաչու սարքերը: Եվ հենց այդ ժամանակից իմ խմբակներում փորձել եմ ինչ-որ չափով այդ ուղղությունը զարգացնել, օրինակ, սիլմուլյատորով երեխաներին անօդաչուներ ղեկավարել եմ սովորեցրել, որ դաշտային պայմաններում կարողանան այն աշխատացնել: Փորձերից մեկը համակարգչով է, մյուսը՝ դաշտում. իրականում՝ դա նույն գործողությունն է պահանջում, ուղղակի դաշտում անօդաչու կոտրելը, բնականաբար, մեծ գումար է արժենում: Բացի այդ, 3 D տպիչից պատրաստել ենք նաեւ փորձնական դրոններ եւ պենոպլաստից ինքնաթիռներ: Այս ողջ գործընթացի հիմքը պետք է դպրոցից դրվի, որպեսզի երեխաները ֆիզիկայից եւ մաթեմատիկայից տարրական գիտելիքներ ունենան, այլ ոչ թե այդ առարկաները վանեն պատանիներին՝ որոշ ոչ կոմպետենտ ուսուցիչների եւ կրթական համակարգի բացերի պատճառով: Այդ ամենը կրկնակի դժվարացնում է մեր աշխատանքը. տեխնոլոգիական կամ մասնագիտական որոշ հարցերում ավելի խորանալու փոխարեն՝ մենք երբեմն, օրինակ, կոորդինատային համակարգ ենք բացատրում 8-րդ դասարանցուն: Իսկ այդպես պետք է չլինի: Նույն իրավիճակը բուհում է. շատ հաճախ դպրոցից հետո նաեւ համալսարանում է ուսանողն անիմաստ ժամանակ վատնում եւ հիասթափվում ակադեմիական կրթությունից, մինչդեռ, օրինակ, ՏՏ ընկերություններն աշխատանքի ընդունելու համար բարձր պահանջներ են սահմանում, որի արդյունքում շատերը մնում են առանց աշխատանքի: Ես, օրինակ, համապատասխան հմտություններ եւ գիտելիքներ ձեռք եմ բերել ինքնակրթությամբ եւ աշխատանքային փորձով»*,- ասում է Հայկը եւ ընդգծում, որ իրեն հաջողվել է ՏՏ ոլորտ մտնել, երբ ԱՏՁՄ-ն 2016-ի քառօրյա պատերազմի մասնակիցների համար ավճար դասընթացներ է անցկացրել:

*«Հենց այդ ժամանակ ընտրվեցի՝ որպես խմբավար, եւ այդ հիմքի ու ինքնակրթության շնորհիվ արդեն հինգ տարի զբաղվում եմ այս գործունեությամբ: Իրականում ներկայիս սերունդը շատ հետաքրքրված է տեղեկատվական տեխնոլոգիաներով. նրանք անընդատ աշխատում են իրենց վրա, նոր իդեաներ առաջարկում, ռոբոտներ պատրաստում, մինչդեռ համակարգը մնում է կարծրացած: Այսինքն՝ այս սերունդը չի վախենում իր նորարար միտքն արտահայտել եւ չի հարմարվում հնի հետ, հետեւաբար նրանց պետք է անընդհատ խրախուսել, եւ ստարտափները զարգացնել»*,- համոզված է Հայկը:



Ըստ մեր զրուցակցի՝ *«Արմաթն օդում»* լաբորատորիայում կերգրավվեն այն պատանիները, որոնք ունեն համապատասխան գիտելիքների ներուժ եւ պոտենցիալ: *««Արմաթն օդում» ծրագիրը կլինի նրանց ուսումնառության հաջորդ մակարդակը: Այժմ անօդաչու սարքերի լաբորատորիաների խմբավարների վերապատրաստումները գործնական փուլում են, որի ավարտից հետո նախատեսվում է բացել առաջին լաբորատորիան: Այդտեղ պատանիները կստանան անօդաչու թռչող սարքերի աշխատանքի տեսական գիտելիքներ, կյուրացնեն դրանց նախագծման ու պատրաստման, ծրագրային ապահովման, տեխնիկական սպասարկման եւ կառավարման առանձնահատկությունները: Լաբորատորիաների կրթական ծրագրում ընդգրկված են ե՛ւ պտուտակավոր, ե՛ւ թեւավոր ԱԹՍ-ները, եւ պատանիները հնարավորություն են ունենալու դրանք հավաքել՝ ըստ անհրաժեշտության, եւ հնարավորության դեպքում ծրագրավորել ու հետո դաշտային պայմաններում փորձարկել»*,- նշում է Հայկը՝ շեշտելով, որ նախագիծը հնարավոր է եղել կյանքի կոչել դրամահավաքի արդյունքում, որին իրենց ներդրումներով միացել են նաեւ խմբավարները. պետական որեւէ աջակցություն չի եղել:

*«Մի փոքր ցանկանում եմ անդրադառնալ ՏՏ ոլորտի խնդիրներին. երբ լաբորատորիաները ներդրվում են, դրանք գույքը, այսպես ասած, մնում է ֆիքսված, սակայն այս ոլորտը պահանջում է ներդրում, քանի որ տեխնիկան զարգանում է, եղածը հնանում է ու շարքից դուրս գալիս: Այսինքն՝ ՏՏ ոլորտն անընդհատ ներդրում է պահանջում, չես կարող ֆիքսված գումար ներդնել ու մի կողմ քաշվել. այն անընդհատ պետք է սպասարկել եւ թարմացնել: Իսկ առանց պետական աջակցության՝ դա դժվար է իրականացնել»*,- փաստում է մեր զրուցակիցը:

Նշենք, որ 2020 թվականի Արցախյան պատերազմի պատճառով Ադրբեջանի հսկողության տակ անցած տարածքներում մնացել է 10 *«Արմաթ»* լաբորատորիա. Արցախում մինչ այդ ընդհանուր առմամբ եղել է 20-ից ավելի լաբորատորիա:

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Արցախ

## Համատեղ ջանքերով

Բելգիայում Արցախի հետ ֆրանսախոս բարեկամության խմբի եւ ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի գրասենյակի համատեղ ջանքերով հատկացվել են անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ ԱՀ Ասկերանի շրջանի սահմանամերձ Խրամորթ համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգման համար:

Ծրագրի պատասխանատուների խոսքով կկատարվեն ներքին եւ արտաքին վերանորոգման աշխատանքներ, կկառուցվեն նոր սանհանգույց եւ ժամանակակից տեխնիկայով հագեցած ճաշարան: Այդ ամենին զուգահեռ կկահավորվեն դասասենյակները, կտեղադրվի ջեռուցման նոր համակարգ:

Անհնար է չնշել, որ իր պատմության ընթացքում Խրամորթը մեկ անգամ չէ,որ հայտնվել է թշնամու թիրախում: Արցախյան առաջին պատերազմի ժամանակ եղել է թշնամու գերության տակ:

Տողերիս հեղինակը գյուղի ազատագրումից հետո տեսել է պատերազմից մեծապես տուժած բնակֆոնդի եւ դպրոցական շենքի անմխիթար վիճակը: Տարիների ընթացքում նաեւ աշխարհասփյուռ հայության ջանքերով հնարավոր եղավ շենացնել գյուղը,վերականգնել դպրոցական շենքի գերակշիռ մասը:

Այս պատերազմի հետեւանք բազում սպառնալիքներից մեկը հենց ուղղված է Խրամորթին: Գյուղը համարյա թե ափաչափ է հեռու թշնամու վերահսկողության տակ անցած տարածքից:

Եվ կրկին մաքառման ու համատեղ ջանքերի ասպարեզ է դարձել: Ոչ միայն բոլոր բնակիչներն են վերադարձել, այլեւ գյուղն ապաստանել է Հադրութից տեղահանված մի քանի ընտանիքի:

ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի գրասենյակի նախագահ **Գասպար Կարապետյանի** համոզմամբ՝ նախագիծը քայլ կլինի Արցախի երեխաների կրթության պայմանները բարելավելու ուղղությամբ: *«Մեր պարտքն ենք համարում նպաստել դրան եւ շարունակելու ենք աշխատել այդ ուղղությամբ: Պետք է բուժել Արցախի վերքերը»*,- նշել է նա:

***Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ***
***ք. Ստեփանակերտ,***
***մեր սեփական թղթակից***

Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան

# Ամառային դպրոց եւ բազմաթիվ կրթական ծրագրեր

Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանը Երեւանի աչքի ընկնող մշակութային օջախներից է, որտեղ մշտական ցուցադրության եւ ցուցահանդեսների, տարաբնույթ միջոցառումների, դասախոսությունների, կրթական եւ ինտերակտիվ ծրագրերի միջոցով այցելուները հաղորդակից են դառնում Իսահակյանի գրական ժառանգությանը:

Թանգարանի տնօրեն **Անժելա Խորենյանի** տեղեկացմամբ՝ թանգարանում տարիներ շարունակ գործում է *«Ամառային դպրոց»* ծրագիրը: *«Ամառային դպրոցի»* շրջանակում, երեխաները իսահակյանական աշխարհում ստանում են գիտելիքներ եւ հմտություններ՝ ինտերակտիվ խաղերի, ձեռքի աշխատանքների, թեմատիկ խաղ-էքսկուրսիաների միջոցով: *«Երեխաների ժամանցը թանգարանում ապահովում ենք ժամը 12:00-16:00-ը, մշակված բազմազան ծրագրով եւ ժամանակացույցով»*,- նշել է տնօրենը եւ հավելել, որ «Ամառային դպրոցիե առկայությունը ծնողների կողմից մշտապես մեծ հավանության է արժանացել, քանի որ թանգարանում երեխաները ոչ միայն խաղում եւ զբաղվում են, այլեւ հաղորդակից են դառնում թանգարանային միջավայրին, փոքր տարիքից սովորում են թանգարանում գործող կանոններին, համապատասխան պահվածքին, ծանոթանում են նմուշներին, հասկանում այդ առարկաների արժեքն ու կարեւորությունը:

Թանգարանը վերջին տարիներին առավել ակտիվորեն նաեւ իրականացնում է կրթական ծրագրեր, որի մեջ ընդգրկված են ՀՀ հանրակրթական դպրոցների բոլոր տարիքային խմբերի երեխաները: Անժելա Խորենյանի խոսքով՝ այդ ծրագրերը կազմվել են Իսահակյանի հեքիաթների, առակների, պատմվածքների, մտորումների, հուշագրությունների, ասույթների հիման վրա: Տնօրենը մանրամասն ներկայացրել է ծրագրերի նկարագրությունները եւ հրավիրել դպրոցականներին իրենց ժամանցն անցկացնել Իսահակյանի տուն-թանգարանում:

*շարունակությունը՝ էջ 6*







Տարվա լավագույնները

# Մաթեմատիկան՝ առավել հասանելի

Երեւանի թիվ 2 հիմնական դպրոցի տարրական դասարանների ուսուցիչներ **Աննա Մելքումյանը, Նարինե Մանուչարյանը** եւ **Զարինե Սարիբեկյանը** *«Տարվա լավագույնները»* մրցույթին ներկայացրել են խմբային հայտ եւ *«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն»* անվանակարգում արժանացել հաղթողի կոչմանը: *«Մաթեմատիկան՝ առավել հասանելի»* առարկայական հեղինակային ծրագիրն իրականացվելու է 4-րդ դասարանում՝ դպրոցական բաղադրիչի հաշվին եւ ապահովելու է ուսուցման տարբերակված մոտեցում:



*«Նման ծրագիր ներկայացնելու միտք հղացավ, երբ գործընկերներով մտածեցինք՝ մաթեմատիկան ավելի հասանելի դարձնել: Իսկ ինչո՞ւ հենց մաթեմատիկան, քանի որ Արցախյան վերջին պատերազմը ցույց տվեց, որ երեխաներին պետք է պատրաստել որպես ապագա գիտնականներ, եւ այդ համատեքստում ճիշտ է խթանել մաթեմատիկա, ֆիզիկա եւ նմանատիպ այլ առարկաները: Մրցույթի ընթացքում մարդկային գործոնը բացակայում էր. էլեկտրոնային փոստին ուղարկել ենք մեր ծրագիրը եւ նույն եղանակով ստացել պատասխան՝ արդյոք հաղթել ենք, թե՝ ոչ: Իսկ սա խոսում է մրցույթի անաչառության եւ ազնիվ հիմունքների մասին: Տարիներ շարունակ նվիրումով աշխատում ես՝ առանց ակնկալիքի, ու այդ նվիրումը որեւէ մրցանակից կախված չէ: Բայց երբ նման մրցույթում հաղթող ես ճանաչվում, ու թվացյալ աննկատ աշխատանքդ ինչ-որ մի տեղ, ինչ-որ մեկը գնահատում է, դա անկասկած ոգեւորում է»*,- մեզ հետ զրույցում ասում է Զարինեն:

Նախագծի համահեղինակ Աննայի խոսքով՝ ծրագիրը նախեւառաջ ունի ուսուցանող նպատակ՝ անհատականացման կամ շերտավորման միջոցով կատարելագործել աշակերտների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, ինչպես նաեւ նպաստել ուսումնական ծրագրի պահանջների իրականացմանը: *«Այս ճանապարհով հնարավոր է փոքրացնել աշակերտի՝ իր հնարավորությունների մակարդակից բացարձակ կամ հարաբերական հետ մնալը, եւ հակառակը՝ խորացնել ու ընդլայնել նրա գիտելիքները՝ ելնելով իր հետաքրքրությունների եւ ընդունակությունների առանձնահատկություններից: Այսինքն՝ ծրագիրը թույլ է տալիս բացահայտել յուրաքանչյուր աշակերտի փաստացի եւ պոտենցիալ հնարավորությունները»*,- ասում է Աննան՝ հավելելով, որ ծրագիրն ունի նաեւ զարգացնող նպատակ, այն է՝ ձեւավորել եւ զարգացնել աշակերտի տրամաբանական ու ստեղծագործական մտածողությունը:

*«Ակնկալվում է, որ ծրագրի ավարտին սովորողները կունենան՝ ծրագրային նյութի շրջանակում կայուն նվազագույն գիտելիքներ, ձեռքբերած գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ եւ հմտություններ, ինչպես նաեւ թիմային աշխատանքում կարողությունների լիարժեք դրսեւորման հմտություններ: Նախատեսվում է ուսումնական գործընթացը կազմակերպել՝ աշակերտների որոշակի խմբի հատուկ առանձնահատկությունները հաշվի առնելով: Այդ նպատակով նկատի են առնվում խմբային եւ անհատական առանձնահատկությունները»*,- իր հերթին ծրագրի մանրամասներն է ներկայացնում ծրագրի մյուս համահեղինակ Նարինեն:

Ըստ ծրագրի հեղինակների՝ հայտորոշիչ թեստի միջոցով նախատեսվում է աշակերտներին բաժանել չորս խմբի: Դելտա IV աստիճան /4-5 միավոր/ անվանմամբ խմբի աշակերտները նյութը յուրացնում են բազմակի վարժություններ կատարելուց հետո եւ ոչ միշտ ամբողջ ծավալով, գիտելիքներին տիրապետում են ավելի երկար ժամանակահատվածում, քան հաջորդ խմբի երեխաները: Գամմա III աստիճան /6-7 միավոր/ խմբում այն աշակերտներն են, որոնք տիրապետում են գիտելիքների եւ կարողությունների պարտադիր հիմնական ծավալին, էական անմիջապես չեն կարողանում առանձնացնել, որոշակի վարժողական աշխատանքից հետո նոր կարողանում են մասնավորի մեջ տեսնել ընդհանուրը: Բետա II աստիճան /8-9 միավոր/ խմբում այն աշակերտներն են, որոնք դպրոցին նախապատրաստվածության բարձր մակարդակում են, տիրապետում են գիտելիքների եւ կարողությունների հիմնական ծավալին: Այդ խմբի երեխաները ուսումնական նյութը յուրացնում են մարզողական աշխատանքներից հետո: Ալֆա I աստիճան /9-10 միավոր/ խմբի երեխաներն ունեն արտահայտված ճանաչողական ունակություններ, ստեղծագործական եւ տրամաբանական առաջադրանքներ կատարելու կարողություններ, առանց դժվարության ընկալում են ուսումնասիրվող նյութը, առանձնացնում են գլխավորը, ունակ են ինքնուրույն զարգացնել դասի ժամանակ արված բացահայտումները, հեշտությամբ կարողանում են ստացած գիտելիքները գործադրել նոր իրավիճակներում, կարճ ժամանակահատվածում հասնում են գիտելիքների բարձր մակարդակի:

*«Ծրագրի շրջանակում նախատեսվում է յուրաքանչյուր շաբաթ մաթեմատիկայի մեկ դաս անցկացնել ձեւավորված խմբերում, ընդ որում՝ այն անցկացնել թեմատիկ պլանին համապատասխան, որը նախատեսված կլինի 34 շաբաթվա համար: Յուրաքանչյուր խմբում աշխատանքը կկազմակերպվի տվյալ աստիճանում ընդգրկված աշակերտների կարիքներին համապատասխան: Աշակերտի հաջողությունների հարցում ժամանակին կազմակերպված հայտորոշումը թույլ կտա ճկուն կերպով փոխել խմբերի կազմը: Տարեվերջյան գիտելիքների ստուգման միջոցով կամփոփենք արդյունքները, եւ ծրագիրը հաջողությամբ ավարտելու դեպքում սովորողները կպարգեւատրվեն ավարտական հավաստագրերով»*,- շեշտում են ծրագրի հեղինակները եւ փաստում, որ այն կարելի է իրականացնել բոլոր դասարաններում, տարբեր առարկաների շրջանակում՝ յուրաքանչյուր տարվա հիմքում դնելով նախորդ տարվա արդյունքները: *«Ծրագիրը շարունակական է լինելու, եւ վստահ ենք, որ շատ դպրոցներում այն կիրառելի կլինի եւ օգտակար»*,- վստահեցնում են մեր զրուցակիցները:

***Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱ***

# Ամառային դպրոց եւ բազմաթիվ կրթական ծրագրեր

***սկիզբը՝ էջ 5***

***«Ավ. Իսահակյան. «Եղնիկը»* կրթական ծրագրի** ընթացքում երեխաներն ընթերցում եւ քննարկում են Ավ. Իսահակյանի *«Եղնիկը»* պատմվածքը, հարցերի միջոցով վերապատմում բովանդակությունը: Այնուհետեւ, ծրագրի մասնակիցները ապլիկացիայի միջոցով ստեղծում են անտառի գեղեցիկ պատկեր, որտեղ երազում էր ապրել եղնիկը, իսկ հեքիաթային ծառի տերեւների վրա գրում եւ փակցնում են բնությունը, շրջակա միջավայրը մաքուր պահելու եւ պահպանելու իրենց ցանկություններն ու մաղթանքները: Ծրագիրը երեխաներին սովորեցնում է սիրել բնությունը, բնության հետ ապրել հաշտ եւ ներդաշնակ: Նախատեսված է 2-6-րդ դասարանի աշակերտների համար:

***«Ես բնության մի մասնիկն եմ»* կրթական ծրագրի** շրջանակում երեխաները ծանոթանում են մայր բնությանը սպառնացող վտանգներին, փորձում են բացահայտել այդ խնդիրների առաջացման պատճառները, *«խոսել»* բնության հետ: Ինտերակտիվ խաղի միջոցով երեխաները՝ որպես բնության բարեկամ ու պաշտպան, փորձում են ձեւակերպել այդ խնդիրների լուծմանն ուղղված իրենց քայլերը՝ հասկանալով մարդու դերը բնության պահպանության գործում: Նախատեսված է 3-10-րդ դասարանի աշակերտների համար:

***«Իմ հեքիաթի գույները»* կրթական ծրագրի** ընթացքում, հեքիաթի արտասովոր միջավայրում երեխաները ծանոթանում են ժողովրդական իմաստության այս տեսակին, տարբեր ժողովուրդների հեքիաթների առանձնահատկություններին, հեքիաթագիրներին եւ գույների ներկապնակի միջոցով փորձում են կերտել իրենց հեքիաթը: Նախատեսված է 8-12 տարեկան աշակերտների համար:

***«Մանկության թեւերով»* կրթական ծրագրի** շրջանակում երեխաները մտովի տեղափոխվում են Ավ. Իսահակյանի մանկության հեքիաթային աշխարհ եւ օրգանիկ նյութերով վերակերտում են Ղազարապատի մանրակերտը: Նախատեսված է 1-6-րդ դասարանի աշակերտների համար:

***«Արեւի մոտ»* կրթական ծրագրի** շրջանակում երեխաները, մասնագետի օգնությամբ, ընթերցում եւ քննարկում են Իսահակյանի «Արեւի մոտե հեքիաթը եւ գունավոր թղթերով ստեղծում հեքիաթի հերոսի համար ցանկալի միջավայր: Նախատեսված է 1-4-րդ դասարանի աշակերտների համար:

***«Աշխարհում ամենալավն իմ տունն է»* կրթական ծրագրի** շրջանակում երեխաները մասնագետի օգնությամբ կարդում են Իսահակյանի *«Երջանիկ խրճիթը»* ստեղծագործությունը եւ թեմատիկ դեկորների օգնությամբ ինքնուրույն բեմադրում այն: Նախատեսված է 1-6-րդ դասարանի աշակերտների համար:



***«Սեւանը Հայաստանի աչքն է»* կրթական ծրագրի** շրջանակում երեխաները ծանոթանում են Սեւանի նկատմամբ բանաստեղծի մեծ սիրուն եւ պաշտամունքին՝ արտահայտված Իսահակյանի թողած հուշերում, ինչպես նաեւ տեղեկանում են Սեւանին սպառնացող վտանգների մասին: Այնուհետեւ, թանգարանի աշխատակցի օգնությամբ, պատրաստում են Սեւանի մանրակերտը՝ մաղթանքներ հղելով Սեւանին: Նախատեսված է 5-7-րդ դասարանի աշակերտների համար:

***«Վարպետը, ես եւ մայրաքաղաք Անին»* կրթական ծրագրի** շրջանակում երեխաներն Անիի մասին Վարպետի թողած հուշերի հետքերով երեւակայական շրջայց են կատարում հայոց հինավուրց մայրաքաղաք Անիում եւ հատուկ պատրաստված դետալների օգնությամբ վերակերտում են Անիի պարիսպների մանրակերտը: Նախատեսված է 5-12-րդ դասարանի աշակերտների համար:

***«Թանգարանը քո ձեռքերում»* կրթական ծրագրի** շրջանակում մասնակիցները ստանում են բացառիկ հնարավորություն՝ դիտել, շոշափել, չափել եւ կազմել թանգարանային առարկաների համար վկայագրեր: Ծրագիրն օգնում է մասնակիցներին մասնագիտական կողմնորոշման հարցում: Նախատեսված է 12-ից բարձր տարիքի համար:

***«Ինչ է ասում առակը»* կրթական ծրագրի** շրջանակում երեխաները ինտերակտիվ միջավայրում ծանոթանում են ժողովրդական իմաստություններին, սովորում են, թե ինչ է *«պատմում»* առակը: Խաղերի եւ երեխաների ստեղծած մուլտֆիլմերի օգնությամբ ծանոթանում եւ քննարկում են Իսահակյանի առակները, կազմում են գիրք եւ գունազարդում այն: Նախատեսված է 2-6-րդ դասարանի աշակերտների համար:

***«Նամակ զինվորին»* կրթական ծրագրի** ընթացքում երեխաները ծանոթանում են նամակի պատմությանը, ընթերցում հատվածներ Ավ. Իսահակյանի՝ տարբեր տարիներին գրված նամակներից: Այնուհետեւ, երեխաները հայկական բանակում ծառայող զինվորներին նամակներ են գրում, որոնք թանգարանի աշխատակիցների օգնությամբ ուղարկվում են տարբեր զորամասեր: Նախատեսված է 8-14 տարեկան երեխաների համար:

***Ալլա ՍԵՐՈԲՅԱՆ***

# Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 եւ 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլաններ

### Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 20.07.2021 թ. N54-Ն հրամանի հավելվածի

## I. Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ուսումնական պարապմունքները սկսելու, ավարտելու, ուսումնական պարապմունքների ընթացքում տրվող արձակուրդների ժամկետները՝ 2021-2022 եւ 2022-2023 ուսումնական տարիների համար

**1.** 2021-2022 ուսումնական տարվա ուսումնական պարապմունքները հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ Հաստատություն) սկսվում են 2021թ. սեպտեմբերի 1-ին, ավարտվում 2022թ. մայիսի 27-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա եւ մայիսի 30-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ եւ 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:

**2.** 2021-2022 ուսումնական տարում՝

*1) Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2021թ. հոկտեմբերի 25-ից 31-ը ներառյալ, ձմեռային՝ 2021թ. դեկտեմբերի 27-ից 2022թ. հունվարի 9-ը ներառյալ, գարնանային՝ 2022թ. մարտի 21-ից 27-ը ներառյալ:*

*2) Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2021թ. հոկտեմբերի 18-ից 31-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2021թ. դեկտեմբերի 27-ից 2022թ. հունվարի 23-ը ներառյալ, գարնանայինը՝ 2022թ. մարտի 21-ից ապրիլի 3-ը ներառյալ:*

*3) Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2021թ. հոկտեմբերի 25-ից 31-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2021թ. դեկտեմբերի 27-ից 2022թ. հունվարի 23-ը ներառյալ եւ գարնանայինը՝ 2022թ. մարտի 21-ից 27-ը ներառյալ:*

**3.** 2022-2023 ուսումնական տարվա ուսումնական պարապմունքները Հաստատությունում սկսվում են 2022թ. սեպտեմբերի 1-ին, ավարտվում՝ 2023թ. մայիսի 26-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում եւ մայիսի 27-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ եւ 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:

**4.** 2022-2023 ուսումնական տարում՝

*1) Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2022թ. հոկտեմբերի 24-ից 30-ը ներառյալ, ձմեռային՝ 2022թ. դեկտեմբերի 26-ից 2023թ. հունվարի 8-ը ներառյալ, գարնանային՝ 2023թ. մարտի 27-ից ապրիլի 2-ը ներառյալ:*

*2) Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2022թ. հոկտեմբերի 17-ից 30-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2022թ. դեկտեմբերի 26-ից 2023թ. հունվարի 22-ը ներառյալ, գարնանայինը՝ 2023թ. մարտի 20-ից ապրիլի 2-ը ներառյալ:*

*3) Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2022թ. հոկտեմբերի 24-ից 30-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2022թ. դեկտեմբերի 26-ից 2023թ. հունվարի 22-ը ներառյալ եւ գարնանայինը՝ 2023թ. մարտի 27-ից ապրիլի 2-ը ներառյալ:*

**5.** Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն), տարածքային կառավարման լիազոր մարմնի (Երեւանի քաղաքապետարանի) (այսուհետ՝ Լիազոր մարմին) ենթակայության հաստատությունների համար արձակուրդների ժամկետներում Լիազոր մարմնի կողմից կարող են կատարվել փոփոխություններ՝ Հաստատության առաջարկությամբ: Լիազոր մարմինը (մարզպետը, Երեւանի քաղաքապետը) փոփոխությունները առնվազն 5 աշխատանքային օր առաջ համաձայնեցնում է Նախարարության հետ:

**6.** Հաստատությունն անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ եւ այլն) կարող է հանրակրթական հիմնական կրթական ծրագիրը իրականացնել հեռավար ձեւով՝ ՀՀ կրթության, գիտության մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 20.05.2020թ. N 09-Ն հրամանի համաձայն:

**7.** Նախարարությունը անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ եւ այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ կատարելով փոփոխություններ ուսումնական պարապմունքների եւ սովորողների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցերում: Սույն փոփոխությունները կարող է կատարել նաեւ Հաստատությունը՝ բաց թողնված ժամերը մինչեւ ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու կամ ուսումնական պարապմունքները հեռավար եղանակով կազմակերպելու, ինչպես նաեւ, ըստ Հաստատության ենթակայության, Լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով:

**8.** Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում Հաստատության դիմումի հիման վրա Լիազոր մարմինը (մարզպետը, Երեւանի քաղաքապետը) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելով Նախարարությանը:

**9.** Նախարարության ենթակայության հաստատություններում արձակուրդների ժամկետների փոփոխությունները, ինչպես նաեւ Հաստատության կողմից լրացուցիչ արձակուրդի նախատեսումը կատարվում է Հաստատության նախաձեռնությամբ, Նախարարության համաձայնությամբ:

**10.** Ոչ պետական ուսումնական հաստատությունում արձակուրդների տեւողությունը եւ ժամկետները, ինչպես նաեւ դրանցում կատարվող փոփոխությունները սահմանում է հիմնադիրը՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահելով Նախարարությանը:

## II. Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումներ

**11.** Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) օրինակելի ուսումնական պլանները (այսուհետ՝ Ուսումնական պլան) ունեն երկու՝ պետական եւ դպրոցական (մասնագիտացված դպրոցներում՝ մասնագիտական, հատուկ դպրոցներում՝ զարգացնող, հատուկ մանկավարժական) բաղադրիչ: Պետական եւ դպրոցական (մասնագիտացված դպրոցներում՝ մասնագիտական, հատուկ դպրոցներում՝ զարգացնող, հատուկ մանկավարժական) բաղադրիչները պարտադիր են եւ պետական ուսումնական հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Հաստատությունը Ուսումնական պլանի հիման վրա դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ հաստատում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլանը(ները):

**12.** Մասնագիտացված դպրոցի Ուսումնական պլանը կազմվում է՝ նրա կողմից իրականացվող մասնագիտացված ծրագրերի (ռազմագիտության, սպորտի, արվեստների, արհեստների, գիտության որեւէ բնագավառի) հիման վրա:

**13.** Հաստատության Ուսումնական պլանը սահմանում է միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների եւ հանրակրթական պետական ծրագրի նորմատիվային ծավալը (սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը)՝ ըստ դասարանների:

**14.** Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել Նախարարության համաձայնությամբ՝

*1) արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների ուսուցումն առավել բարենպաստ պայմաններում կազմակերպելու համար,*

*2) բազմահամակազմ կամ թերբեռնված դասարանների առկայության դեպքում,*

*3) Նախարարության կողմից տվյալ Հաստատության համար երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում իրականացնելու դեպքում:*

**15.** Հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպվում է Հաստատության կողմից հաստատված ուսումնական պլանների հիման վրա՝ յուրաքանչյուր սովորողի համար, ըստ անհրաժեշտության, կազմելով անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ):

**16.** Անհրաժեշտության դեպքում՝

*1) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ բացառությամբ ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն՝ միջին, ծանր, խորը խանգարումներ ունեցող երեխաների, ինչպես նաեւ տնային եւ հիվանդանոցային պայմաններում երկարատեւ բուժվող երեխաների անհատական ուսուցումը իրականացվում է «Տնային եւ հիվանդանոցային պայմաններում երկարատեւ բուժվող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլանե-ով՝ համաձայն սույն Հավելվածի գլուխ 3-ի Աղյուսակ 6-ի:*

*2) Տնային եւ հիվանդանոցային պայմաններում երկարատեւ բուժվող, ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն՝ միջին, ծանր, խորը խանգարումներ ունեցող երեխաների ուսուցումը իրականացվում է «Տնային եւ հիվանդանոցային պայմաններում երկարատեւ բուժվող միջին, ծանր եւ խորը մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլանե-ով՝ համաձայն սույն Հավելվածի գլուխ 3-ի Աղյուսակ 16-ի:*

**17.** Ուսումնական պլանի պետական պարտադիր եւ դպրոցական բաղադրիչները ուղղված են Հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով եւ ծրագրերով ամրագրված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման եւ արժեքների ձեւավորմանը:

**18.** Հաստատությունում (2-12-րդ դասարաններ) գործում է սովորողների գնահատման 10 միավորային սանդղակ:

**19.** Գիտելիքների ստուգումների, հիմնական եւ միջնակարգ կրթության ավարտական եւ պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման այլ սանդղակները բերվում են գնահատման 10 կամ 20 միավորային գրանցման:

**20.** Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձեւավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների (գնահատականի) հիման վրա՝ տարեկան գնահատականները՝ բացառությամբ սույն գլխի 12-րդ կետով նախատեսված դեպքի:

**21.** Սովորողների ընթացիկ գնահատումն իրականացվում է բանավոր հարցման, գործնական աշխատանքի, թեմատիկ աշխատանքի եւ կիսամյակային ամփոփիչ աշխատանքի ձեւերով: Թեմատիկ եւ կիսամյակային ամփոփիչ աշխատանքներն իրականացվում են գրավոր եղանակով, իսկ անհնարինության դեպքում՝ բանավոր, աշխատանքի ամբողջ ընթացքը որակյալ տեսաձայնագրելու պայմանով: Բանավոր հարցումների, գործնական աշխատանքների, թեմատիկ աշխատանքների նվազագույն թիվը կիսամյակի ընթացքում սահմանում է Հաստատությունը՝ մանկավարժական խորհրդի որոշմամբ, առաջնորդվելով Նախարարության կողմից հաստատված առարկայի ծրագրով, գնահատման մեթոդաբանությամբ եւ մեթոդական ցուցումներով: Կիսամյակային ամփոփիչ աշխատանքն իրականացվում է կիսամյակի ընթացքում մեկ անգամ՝ կիսամյակի վերջում:

*շարունակությունը՝ էջ 8*

# Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 եւ 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլաններ

*սկիզբը` էջ 7*

**22.** Առաջին դասարանում սովորողներին ընթացիկ եւ ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում. ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով (ձեւավորող գնահատում): Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը` համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարի` 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 846-Ն հրամանով հաստատված կարգի:

**23.** Ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն ունեցող սովորողների գիտելիքների ստուգումը կատարվում է` համաձայն անհատական ուսուցման պլանի (ԱՈւՊ):

**24.** Այն սովորողների համար, որոնք կրթական կարիքի գնահատման արդյունքում չեն կարող յուրացնել ուսումնական որեւէ առարկայի բովանդակության պարտադիր նվազագույն ծավալը, Ուսումնական պլանով այդ առարկային հատկացված ժամերը տրամադրվում են սովորողի ընդունակություններին եւ հնարավորություններին համապատասխան` ԱՈՒՊ-ով սահմանված տվյալ առարկայական ծրագրից ընտրված եւ տվյալ սովորողին հարմարեցված բովանդակային բաղադրիչների ուսումնասիրմանը:

**25.** Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձեւը դասն է: Դասի (մեկ ակադեմիական դասաժամի) տեւողությունը 45 րոպե է: Դասերի սկիզբը եւ դասամիջոցների տեւողությունը սահմանում է ուսումնական հաստատությունը` հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի` 28.03.2017թ. N 12-Ն հրամանի 77-րդ կետի պահանջները:

**26.** Տարրական դպրոցում յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող եւ վերականգնող վարժություններին ու խաղերին` Նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:

**27. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգ.**

*1) Դպրոցական (մասնագիտական) բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է Ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված եւ (կամ) Նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին, հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման ծրագրերի իրականացմանը եւ (կամ) սովորողների նախասիրություններին, ուսումնական հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով:*

*2) Մասնագիտացված ուսումնական հաստատության ուսումնական պլանի դպրոցական (մասնագիտական) բաղադրիչում ընդգրկված ռազմագիտության, սպորտի, արհեստների, արվեստների, գիտության որեւէ բնագավառի (ճյուղի) մասնագիտացված ծրագրերը (ենթածրագրերը) ներկայացվում են մի քանի առարկաների (դասընթացների) միջոցով:*

*3) Նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվում է «Կիրառական տնտեսագիտություն» (9-րդ դասարան), «Կյանքի հմտություններ» (2-8-րդ դասարաններ), «Բնապահպանություն» (7-8-րդ կամ 8-9-րդ դասարաններ), «Էկոլոգիա» (8-9-րդ դասարաններ), «Էներգիայի եւ ռեսուրսների օգտագործում» (7-րդ կամ 8-րդ դասարան), «Ֆերմերային գործ» (11-12-րդ դասարաններ), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ եւ 11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (2-4-րդ դասարաններ), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հոգեբանություն» (7-8-րդ դասարաններ), «Մշակույթի պատմություն» (7-9-րդ դասարաններ), «Տնտեսագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ձեռնարկատիրական կրթություն» (10-11-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը: Նշված առարկաների ուսուցումը այլ դասարաններում Հաստատության կողմից կարող է իրականացվել դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո: Հաստատությունը կարող է ներդնել նաեւ նոր առարկաներ (դասընթացներ)` դրանց ծրագրերը Նախարարության կողմից հաստատվելուց հետո:*

*4) Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ` ելնելով Հաստատության, դասարանի պատրաստվածությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով եւ երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որեւէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից եւ ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաեւ Նախարարության հանձնարարականներից:*

*5) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը պարտադիր է:*

*6) Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է Հաստատության ուսումնական պլանում եւ դասացուցակում:*

**28. Զարգացնող, հատուկ մանկավարժական ժամաքանակի տնօրինման կարգ.**

*1) Զարգացնող, հատուկ մանկավարժական պարապմունքներն անցկացվում են խմբային կամ անհատական պարապմունքների ձեւով` ելնելով սովորողների կարիքներից: Պարապմունքներն ամրագրվում են դասացուցակում կամ առանձին կարգացուցակում: Անհատական պարապմունքների դեպքում զարգացնող, հատուկ մանկավարժական պարապմունքներին հատկացվող ժամաքանակը բաշխվում է շաբաթվա օրերի միջեւ` ամրագրվելով դասացուցակին կից կարգացուցակում:*

*2) Զարգացնող, հատուկ մանկավարժական խմբային պարապմունքի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող եւ վերականգնող վարժություններին ու խաղերին` ելնելով սովորողների կարիքներից:*

**29.** Սույն Հավելվածի գլուխ 3-ի 12-րդ, 13-րդ, 15–րդ աղյուսակներով ներկայացված ուսումնական պլաններով առաջնորդվող հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում` յուրաքանչյուր 4 դասարանի համար նախատեսվում է մեկ հատուկ մանկավարժ` երեխայի զարգացման առանձնահատկությանը բնորոշ կարիքներին նպատակաուղղված հատուկ մանկավարժական խմբային եւ անհատական գործընթացի իրականացման, ԱՈՒՊ-ով նախատեսված աշխատանքների ապահովման, ինչպես նաեւ սովորողների սոցիալական հմտությունների զարգացման նպատակով:

**30.** Սույն Հավելվածի գլուխ 3-ի 14-րդ աղյուսակով ներկայացված ուսումնական պլանով առաջնորդվող` Հակասոցիալական վարք ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում` անձի ձեւավորման, նրա սոցիալ-հոգեբանական հմտությունների եւ նախասիրությունների զարգացման նպատակով յուրաքանչյուր դասարանի համար կազմակերպվում է 1 (մեկ) խմբակ: Խմբակները կոմպլեկտավորվում են` ըստ երեխաների նախասիրությունների:

**31.** Հաստատության դասարանները կազմավորվում են *«Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգը սահմանելու մասին»* ՀՀ կառավարության` 30.08.2018թ. N 954-Ն որոշման համաձայն:

**32.** Լսողության, տեսողության խանգարում ունեցող երեխաների Հաստատության տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ) *«Ռուսաց լեզու»*, *«Օտար լեզու»* առարկաների դասաժամերին կարելի է դասարանը բաժանել երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 12 եւ ավելի է:

**33.** Լսողության, տեսողության խանգարում ունեցող երեխաների Հաստատության Հայոց լեզու (7-9-րդ դասարաններ), «Ռուսաց լեզուե, *«Օտար լեզու»* (5-9-րդ դասարաններ), *«Ինֆորմատիկա»* (6-9-րդ դասարաններ` համակարգչային դասարանների առկայության դեպքում) առարկաների պարապմունքներին դասարանը բաժանվում է երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 15 եւ ավելի է:

**34.** Տեսողության, լսողության խանգարումներ, մտավոր հետամնացություն ունեցող սովորողների հանրակրթական հատուկ հաստատություններում «Նախնական զինվորական պատրաստությունե առարկան փոխարինվում է *«Անվտանգ կենսագործունեություն»* առարկայով:

**35. Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում.**

*1) 12-րդ դասարանի առաջին կիսամյակում ուսումնասիրվող հանրակրթական պետական ծրագրի Ուսումնական պլանի նորմատիվային ծավալը սահմանվում է շաբաթական 34 դասաժամ` ապահովելով 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաների ուսումնասիրությունը:*

*2) Հաստատության 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված առարկաների ուսումնասիրությունն ավարտվում է 12-րդ դասարանի առաջին կիսամյակի վերջում` կիսամյակային (տարեկան) գնահատականով եւ (կամ) ամփոփիչ ատեստավորմամբ (ստուգարքով, պետական ավարտական քննությամբ): «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) եւ սովորողի կողմից երկրորդ կիսամյակում ուսումնասիրության համար ընտրված առարկաների ուսումնասիրությունն ավարտվում է 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի վերջում` տարեկան գնահատականով եւ (կամ) ամփոփիչ ատեստավորմամբ (ստուգարքով, պետական ավարտական քննությամբ):*

*3) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի շաբաթական ուսումնական բեռնվածությունը ձեւավորվում է պարտադիր ուսումնասիրության «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ, 1 ժամ) առարկայի եւ սովորողի ընտրությամբ առնվազն երեք առարկայի ուսումնառության համար հատկացված ժամաքանակից` ապահովելով առնվազն 31 դասաժամ:*

*4) Նորմատիվային 34 դասաժամի եւ սովորողի ուսումնական պարտադիր բեռնվածության 31 դասաժամի տարբերությունից մնացած 3 դասաժամը տնօրինում է սովորողը:*

*5) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաներին Հաստատության ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը տրվում է այդ առարկաների ուսումնական նյութի կրկնությանը: Ուսումնական նյութի կրկնությունը ինքնուրույն աշխատանքի միջոցով կարող է իրականացվել հեռավար կրթության տեխնոլոգիաների կիրառմամբ` Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի` 20.05.2020թ. N 09-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգի» համաձայն:*

*6) 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում ուսումնասիրության համար իրենց կողմից ընտրված ուսումնական առարկաների ցանկը Հաստատության սովորողները ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում մինչեւ դեկտեմբերի 1-ը գրավոր հայտնում են Հաստատության տնօրենին: Միասնական քննություններ հանձնող սովորողները ցանկում ներառում են նաեւ միասնական քննական առարկաները:*

*7) Եթե Հաստատության ուսումնական պլանով նախատեսված որեւէ առարկա(ներ) դասարանի սովորողներից ոչ մեկը չի ընտրել, ապա այդ առարկային(ներին) ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը վերաբաշխվում է տվյալ դասարանի սովորողների կողմից ընտրված ուսումնական առարկաներին, եւ կազմվում է տվյալ դասարանի 2-րդ կիսամյակի ուսումնական պլանը:*

*8) Դասարանի ուսումնական պլանին համապատասխան` կազմվում է տվյալ դասարանի դասացուցակը:*

*9) Մեկից ավելի դասարանների առկայության դեպքում կարող են ձեւավորվել միեւնույն առարկան ուսումնասիրող զուգահեռ դասարանների սովորողներից կազմված ուսումնական խմբեր: Այդ դեպքում տվյալ ուսումնական առարկայից անհրաժեշտ գրանցումները կատարվում են էլեկտրոնային դասամատյանում:*

*10) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաների ուսումնական նյութի կրկնությունը կազմակերպվում է դասարանային (դասացուցակին համապատասխան) եւ արտադասարանային ինքնուրույն ուսումնական գործունեության տեսակներով:*

*11) Սովորողը մասնակցում է միայն իր ընտրած առարկաների դասարանային ուսումնական պարապմունքներին:*

*12) Եթե սովորողի կողմից ընտրած ուսումնական պարապմունքների ժամաքանակը շաբաթվա ընթացքում պակաս է 31 դասաժամից, ապա պակաս ժամերի չափով սովորողը մասնակցում է արտադասարանային ուսումնական պարապմունքներին:*

*13) Սովորողի արտադասարանային պարապմունքներին մասնակցության տեւողությունը որոշվում է 31 ժամի եւ սովորողի դասացուցակային բեռնվածության տարբերությամբ:*

***շարունակությունը` էջ 9***

# Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 եւ 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլաններ

*սկիզբը՝ էջ 8*

*14) Արտադասարանային պարապմունքներին սովորողի(ների) մասնակցությունը հաշվառվում է եւ գրանցվում համապատասխան մատյանում դասղեկի կողմից:*

*15) Արտադասարանային ինքնուրույն ուսումնական գործունեության տեսակներ են՝ ուսուցիչների կողմից տրված հանձնարարությունների կատարումը, լրացուցիչ ուսումնական գրականության եւ այլ աղբյուրների ուսումնասիրումը, գործնական եւ փորձնական աշխատանքների կատարումը, ուսումնական նախագծերի իրականացումը, հիմնահարցերի հետազոտումը, ստեղծագործական աշխատանքը, տեխնիկական սարքերով եւ գործիքներով աշխատանքների կատարումը, գրավոր աշխատանքները, նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի կիրառումը, անհատական եւ խմբային, ինքնուրույն եւ համագործակցային աշխատանքների կատարումը, ուսումնական էքսկուրսիաների անցկացումը եւ այլն:*

*16) Սովորողն իր տնօրինմանը հատկացված 3 ժամը կարող է օգտագործել կրթական այլ ծառայություններ ստանալու նպատակով՝ տվյալ Հաստատությունում կամ այլ հաստատություններում:*

**36. Օտար լեզվի ընտրության կարգ.**

*1) Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում դասավանդվում է երկու օտար լեզու, որոնցից առաջինը ռուսերենն է, երկրորդը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ Նախարարության կողմից երաշխավորված ծրագիր ունեցող այլ լեզու:*

*2) Հաստատության ընտրությամբ՝ երրորդ օտար լեզու (բացի ռուսերենից եւ մյուս օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ 5-9-րդ դասարաններում (շաբաթական 1.5 կամ 2 ժամ) եւ 10-12-րդ դասարաններում (շաբաթական 2 ժամ)՝ Նախարարության կողմից հաստատված չափորոշիչների եւ ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:*

*3) Նախարարության կողմից՝ Հաստատության մանկավարժական խորհրդի եւ ըստ Հաստատության ենթակայության լիազոր մարմնի առաջարկությունների հիման վրա, կարող է փոխարինվել Հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն եւ այլն) այլ օտար լեզվով, ինչպես նաեւ որոշվել նոր հիմնադրված Հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն:*

**37.** Մասնագիտացված կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում դասարանները ձեւավորվում են Մասնագիտացված դպրոցի կանոնադրության համաձայն:

**38.** Տարրական դպրոցում *«Ռուսաց լեզու»* եւ *«Օտար լեզու»*, միջին դպրոցում եւ ավագ դասարաններում *«Հայոց լեզու»*, *«Ռուսաց լեզու»*, *«Օտար լեզու»* եւ *«Ինֆորմատիկա»* (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 եւ ավելի է:

**39.** Դասարանը նույն կարգով կարելի է բաժանել երկու խմբի նաեւ Նախարարության երաշխավորած *«Գրաբար»* (7-րդ կամ 8-րդ, 11-րդ դասարաններ) առարկայի պարապմունքների ժամանակ՝ դպրոցական բաղադրիչի ժամաքանակն այդ առարկային տրամադրելու դեպքում:

**40.** *«Տեխնոլոգիա»* առարկայի (5-7-րդ դասարաններ) պարապմունքներին դասարանը բաժանվում է երկու խմբի՝ սովորողների ընտրությամբ՝ անկախ սովորողների թվից: Խմբերում ուսուցումը կազմակերպվում է Նախարարության կողմից հաստատված եւ յուրաքանչյուր խմբի համար Հաստատության կողմից ընտրված առարկայական ծրագրով:

**41.** Անհրաժեշտության դեպքում Հաստատությունն իրավասու է վերաբաշխելու առարկայի ուսուցմանը Ուսումնական պլանով հատկացված ժամերը՝ պահպանելով տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակը:

**42.** 8-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի եւ ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է *«Առողջ ապրելակերպ»* դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:

*1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձեւավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին:*

*2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը:*

*3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է ուսումնական պարապմունքների ընթացքում:*

*4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում:*

*5) Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:*

**43.** 6-7-րդ դասարաններում *«Կերպարվեստ»* եւ *«Երաժշտություն»* առարկաներից «Երաժշտությունն» ուսումնական առարկան դասավանդվում է առաջին, իսկ *«Կերպարվեստ»* ուսումնական առարկան՝ երկրորդ կիսամյակում՝ ապահովելով Հաստատության ուսումնական պլանով սահմանված՝ տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակի պահպանման պահանջը: *«Կերպարվեստ»*, *«Երաժշտություն»* եւ *«Ֆիզկուլտուրա»* առարկաների ժամերը կարող են դասացուցակում բաշխվել շաբաթվա նույն օրը այնպես, որ այդ առարկաների՝ ուսումնական պլանով սահմանված շաբաթական կամ ամսեկան ժամերը իրականացվեն այդ օրվա ընթացքում:

**44.** Հաստատությունում, ըստ կրթական ծրագրերի աստիճանների, տարրական, միջին եւ ավագ դպրոցներում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների համար *«Ֆիզկուլտուրա»* առարկայի ուսուցումը կարող է իրականացվել *«Հանրակրթական դպրոցի հատուկ բժշկական խմբերի «Ֆիզկուլտուրա» առարկայի 1-12-րդ դասարանների ծրագրով»*, Հաստատության խմբակների համար նախատեսված ժամաքանակի շրջանակում կամ տվյալ դասարանի *«Ֆիզկուլտուրա»* առարկայի դասաժամերին՝ անհատական ծրագրով:

**45.** Հաստատությունում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների գնահատում *«Ֆիզկուլտուրա»* առարկայից չի կատարվում:

## Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցի օրինակելի ուսումնական պլանների Ընդհանրական պարզաբանումներ

**46.** Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցի (այսուհետ՝ Ավագ դպրոց) օրինակելի ուսումնական պլանները սահմանում են հոսքային ուսուցման ծրագրեր իրականացնող Ավագ դպրոցում միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը՝ ըստ տարբերակված հոսքերի, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների եւ սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը՝ ըստ դասարանների:

**47.** Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող միջնակարգ դպրոցի 10-12-րդ դասարաններում, ֆինանսական միջոցների առկայության դեպքում, Հաստատությունը կարող է առաջնորդվել *«Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցի օրինակելի ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումների»* 46-րդ կետի պահանջներով:

**48.** Ավագ դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետեւյալ խմբերը՝

*1) հիմնական - հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական,*

*2) ընդհանուր:*

**49.** Ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների ուսպլանները, ըստ հոսքերի, տրված են.

*1) ընդհանուր հոսքը՝ «Հաստատության ուսումնական պլան»-ում (համաձայն սույն Հավելվածի Գլուխ 3-ի Աղյուսակ 1-ի),*

*2) հումանիտար հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն Հավելվածի գլուխ 4-ի Աղյուսակ 1-ի),*

*3) բնագիտամաթեմատիկական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն Հավելվածի գլուխ 4-ի Աղյուսակ 2-ի),*

*4) արհեստագործական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի արհեստագործական հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն Հավելվածի Գլուխ 4-ի Աղյուսակ 3-ի):*

**50.** Հոսքային ուսուցման առարկաների դասերին ֆինանսական միջոցների առկայության դեպքում դասարանի խտությունը կարող է սահմանվել 12-14 սովորող՝ ոլորտը կարգավորող սանիտարական եւ շինարարական նորմերի եւ կանոնների պահպանմամբ:

**51.** Ավագ դպրոցի միեւնույն դասարանի(ների) սովորողները ընդհանուր հանրակրթական բաղադրիչի շրջանակում ուսումնասիրվող երկրորդ օտար լեզվի (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որեւէ այլ լեզու) դասաժամին խմբավորվում են ըստ իրենց կողմից հիմնական դպրոցում ուսումնասիրված օտար լեզվի՝ անկախ սովորողների թվից, բայց ոչ ավելի, քան երեք օտար լեզվի (բացի ռուսերենից) համար:

**52. Օրինակելի ուսումնական պլանների կառուցվածքը.**

Հոսքային (խորացված) ուսուցման Ուսումնական պլանները կազմված են ընդհանուր հանրակրթական, հոսքային (արհեստագործական հոսքում՝ մասնագիտական) եւ դպրոցական բաղադրիչներից:

*1) Ընդհանուր հանրակրթական բաղադրիչը ներառում է հանրակրթական ուսումնական առարկան(երը) եւ յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված շաբաթական ժամաքանակները՝ ըստ դասարանների: Ընդհանուր հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի (ենթահոսքի) համար:*

*2) Հոսքային բաղադրիչով սահմանված ժամաքանակը տրամադրվում է խորացված ուսուցմամբ առարկաների դասավանդմանը, իսկ արհեստագործական հոսքում՝ մասնագիտական դասընթացներին: Հոսքային բաղադրիչում ընդգրկված առարկաները (դասընթացները) ուղղված են սովորողի հետագա մասնագիտական կրթության հիմքերի ստեղծմանը եւ հանրակրթությունից մասնագիտական կրթության անցման շարունակականության ապահովմանը, իսկ արհեստագործական հոսքի պարագայում՝ նախնական մասնագիտական կրթության որոշակի որակավորումների շրջանակում համապատասխան հմտությունների ձեռքբերմանը:*

*3) Նախարարությունը, հաշվի առնելով տվյալ Ավագ դպրոցի առանձնահատկությունները, խորացված ուսուցմամբ առարկաների ցանկում կատարում է փոփոխություններ՝ տվյալ հոսքի խորացված ուսուցման առարկաներին ավելացնելով նոր առարկա(ներ)՝ Ավագ դպրոցի առաջարկության եւ սահմանված կարգով հաստատված առարկայական ծրագրի(երի) առկայության դեպքում:*

*4) Դպրոցական բաղադրիչն ընդգրկում է հոսքային ուսուցման բովանդակությունը լրացնող ընտրովի (լրացուցիչ) առարկաները, դասընթացները եւ դրանց ուսուցման համար ըստ դասարանների նախատեսված ժամաքանակները: Այս բաղադրիչը տնօրինում է դպրոցը՝ ղեկավարվելով Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկով:*

*5) Ավագ դպրոցն Ուսումնական պլանների հիման վրա ընդհանուր հանրակրթական, հոսքային եւ դպրոցական բաղադրիչների տնօրինմամբ մշակում է յուրաքանչյուր հոսքի՝ տվյալ ուստարվա ենթահոսքերի իր ուսումնական պլանները: Ենթահոսքերի ուսումնական պլանները կազմելիս դպրոցն ընդհանուր հանրակրթական եւ հոսքային բաղադրիչներով նախատեսված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը հատկացնում է դպրոցական բաղադրիչին:*

*6) Ընդհանուր հանրակրթական, հոսքային եւ դպրոցական բաղադրիչները ֆինանսավորվում են պետական բյուջեից:*

*7) 10-11-րդ դասարաններում եւ 12-րդ դասարանի առաջին կիսամյակում շաբաթական ուսումնական պարտադիր բեռնվածությունը բոլոր հոսքերում սահմանվում է 34 դասաժամ:*

***շարունակությունը՝ էջ 10***

# Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 եւ 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլաններ

*սկիզբը՝ էջ 9*

**53. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգը հոսքային ուսուցմամբ դասարաններում**

*1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվում է Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկի, ինչպես նաեւ տվյալ հոսքային ուսուցմամբ դասարանի ընդհանուր հանրակրթական եւ հոսքային ուսուցման բաղադրիչների առարկաներին:*

*2) Ավագ դպրոցի խորացված ուսուցմամբ հոսքերի համար կարող են երաշխավորվել լրացուցիչ հետեւյալ՝ «Գրաբար» (11-րդ դասարան), «Արտասահմանյան գրականություն» (11-րդ դասարան), «Բանահյուսություն» (հին եւ միջնադարյան շրջան, 11-րդ դասարան), «Ճարտասանություն» (11-րդ դասարան), «Արեւմտահայերեն» (10-րդ կամ 11-րդ դասարան), «Պետության եւ իրավունքի հիմունքներ» (11-րդ դասարան), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հնագիտություն» (10-րդ դասարան), «Ազգագրություն» (10-րդ դասարան), «Հայաստանի հարակից երկրների պատմություն» (11-րդ դասարան), «Կրոնի պատմություն» (11-րդ դասարան), «Արվեստի պատմություն» (10-11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (բնագիտամաթեմատիկական հոսք, 10-11-րդ դասարաններ), «Քրիստոնեական բարոյագիտություն» (12-րդ դասարան), «Բարոյագիտություն» (10-րդ դասարան), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Թվային համակարգեր» (10-րդ դասարան), «Երկրաչափության հիմունքներ» (12-րդ դասարան), «Դիսկրետ մաթեմատիկայի տարրեր» (11-րդ դասարան), «Աստղագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ռադիոէլեկտրոնիկա» (11-րդ դասարան), «Բնօգտագործման եւ բնապահպանության հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Էկոլոգիայի եւ կայուն զարգացման հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Կիրառական քիմիա» (11-րդ դասարան), «Գիտական ճանաչողության հիմունքներ» (11--րդ դասարան), «Բնական գիտությունները եւ մաթեմատիկան» (10-րդ դասարան), «Բնագիտական մտքի պատմություն» (11-րդ դասարան), «Երկրագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Քերականություն եւ բառագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Գրականություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Մասնագիտական կողմնորոշում» (10-րդ կամ 11-րդ դասարան), «Տնտեսագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ձեռնարկատիրական կրթություն» (10-11-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը՝ դրանց առարկայական ծրագրերը Նախարարության կողմից հաստատվելուց հետո:*

*3) Հաստատությունը կարող է ներդնել նաեւ նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:*

**54.** 10-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի եւ ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է *«Առողջ ապրելակերպ»* դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:

*1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձեւավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին:*

*2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը:*

*3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է ուսումնական պարապմունքների ընթացքում:*

*4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում:*

*5) Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:*

**55. Օտար լեզվի ընտրության կարգ.**

*1) Ավագ դպրոցում դասավանդվում է առնվազն երկու օտար լեզու (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ինչպես նաեւ որեւէ այլ լեզու):*

*2) Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու կարելի է դասավանդել Նախարարության կողմից հաստատված համապատասխան առարկայական չափորոշիչներով եւ ծրագրերով (շաբաթական 2 ժամ), ուսումնական գրականության եւ ուսուցման համար անհրաժեշտ այլ պայմանների առկայության դեպքում:*

*3) Ավագ դպրոցը դասավանդվող օտար լեզուն կարող է փոխարինել այլ օտար լեզվով՝ Նախարարության որոշմամբ: Նախարարությունը քննարկում է Ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի առաջարկությունը օտար լեզվի փոխարինման վերաբերյալ եւ կայացնում համապատասխան որոշում:*

*4) Նոր հիմնադրված Ավագ դպրոցում դասավանդվող երկրորդ օտար լեզուն հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ որոշում է Նախարարությունը:*

## III. հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 եւ 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլաններ

**Աղյուսակ 1**

**Հաստատության ուսումնական պլան**

| | Շաբաթական ժամերի քանակը | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ուսումնական առարկաներ | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
| Մայրենի | 7 | 8 | 8 | 8 | 7 | 6 | - | - | - | - | - | - |
| Հայոց լեզու | - | - | - | - | - | - | 3 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| Գրականություն | - | - | - | - | - | - | 2 | 3 | 3 | - | - | - |
| Հայ գրականություն | - | - | - | - | - | - | - | - | - | 2 | 2 | 3 |
| Ռուսաց լեզու | - | 2 | 2 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 2 | 2 | 2 |
| Օտար լեզու | - | - | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| Մաթեմատիկա | 4 | 4 | 4 | 4 | 5 | 5 | - | - | - | - | - | - |
| Երաժշտություն | 2 | 1 | 1 | 1 | 1 | 0.5 | 0.5 | - | - | - | - | - |
| Կերպարվեստ | 2 | 1 | 1 | 1 | 1 | 0.5 | 0.5 | - | - | - | - | - |
| Ես եւ շրջակա աշխարհը | - | 1 | 1 | 2 | - | - | - | - | - | - | - | - |
| Հայրենագիտություն | - | - | - | - | 1 | - | - | - | - | - | - | - |
| Բնագիտություն | - | - | - | - | 2 | 2 | - | - | - | - | - | - |
| Աշխարհագրություն | - | - | - | - | - | 1 | 1 | 2 | - | 2 | 1 | 1 |
| Հայաստանի աշխարհ. | - | - | - | - | - | - | - | - | 2 | - | - | - |
| Հայոց պատմություն | - | - | - | - | - | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 2 | 2 | 2 |
| Համաշխարհային պատմ. | - | - | - | - | - | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Հայոց եկեղեցու պատմ. | - | - | - | - | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | - |
| Հասարակագիտություն | - | - | - | - | - | - | - | 1 | 1 | 2 | 2 | 2 |
| Հանրահաշիվ | - | - | - | - | - | - | 3 | 3 | 3 | 2.5 | 2.5 | 2.5 |
| Երկրաչափություն | - | - | - | - | - | - | 2 | 2 | 2 | 1.5 | 1.5 | 1.5 |
| Ինֆորմատիկա | - | - | - | - | - | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Ֆիզիկա | - | - | - | - | - | - | 2 | 2 | 2 | 2 | 2 | 3 |
| Քիմիա | - | - | - | - | - | - | 1 | 2 | 2 | 2 | 2 | 1 |
| Կենսաբանություն | - | - | - | - | - | - | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| Տեխնոլոգիա | 2 | 2 | 1 | 1 | 1 | 1 | 2 | - | - | - | - | - |
| ՆԶՊ | - | - | - | - | - | - | - | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Ֆիզկուլտուրա | 3 | 2 | 2 | 2 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 1.5 |
| Շախմատ | - | 2 | 2 | 2 | - | - | - | - | - | - | - | - |
| Դպրոցական բաղադրիչ | - | 1 | 2 | 2 | 2 | 2.5 | 2.5 | 2.5 | 2.5 | 3 | 4 | 5.5 |
| Ընդամենը | 20 | 24 | 26 | 28 | 29 | 31 | 34 | 35 | 35 | 34 | 34 | 34 |

**Աղյուսակ 2**

**Ռուսերենի խորացված ուսուցմամբ I - IX դասարանների ուսումնական պլան**

| Ուսումնական առարկաներ | Շաբաթական ժամերի քանակը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX |
| Մայրենի | 7 | 8 | 8 | 8 | 7 | 6 | - | - | - |
| Հայոց լեզու | - | - | - | - | - | - | 3 | 2 | 2 |
| Գրականություն | - | - | - | - | - | - | 2 | 3 | 3 |
| Ռուսաց լեզու | - | 3 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| Օտար լեզու | - | - | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| Մաթեմատիկա | 4 | 4 | 4 | 4 | 5 | 5 | - | - | - |
| Երաժշտություն | 2 | 1 | 1 | 1 | 1 | 0.5 | 0.5 | - | - |
| Կերպարվեստ | 2 | 1 | 1 | 1 | 1 | 0.5 | 0.5 | - | - |
| Ես եւ շրջակա աշխարհը | - | 1 | 1 | 2 | - | - | - | - | - |

*շարունակությունը՝ էջ 11*

# Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 եւ 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլաններ

սկիզբը՝ էջ 10

**Աղյուսակ 2**

### Ռուսերենի խորացված ուսուցմամբ I - IX դասարանների ուսումնական պլան

| Ուսումնական առարկաներ | Շաբաթական ժամերի քանակը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX |
| Բնագիտություն | - | - | - | - | 2 | 2 | - | - | - |
| Աշխարհագրություն | - | - | - | - | - | 1 | 1 | 2 | - |
| Հայաստանի աշխարհագրություն | - | - | - | - | - | - | - | - | 2 |
| Համաշխարհային պատմություն | - | - | - | - | - | 1 | 1 | 1 | 1 |
| Հայոց պատմություն | - | - | - | - | - | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 |
| Հայոց եկեղեցու պատմություն | - | - | - | - | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Հայրենագիտություն | - | - | - | - | 1 | - | - | - | - |
| Հասարակագիտություն | - | - | - | - | - | - | - | 1 | 1 |
| Հանրահաշիվ | - | - | - | - | - | - | 3 | 3 | 3 |
| Երկրաչափություն | - | - | - | - | - | - | 2 | 2 | 2 |
| Ինֆորմատիկա | - | - | - | - | - | 1 | 1 | 1 | 1 |
| Ֆիզիկա | - | - | - | - | - | - | 2 | 2 | 2 |
| Քիմիա | - | - | - | - | - | - | 1 | 2 | 2 |
| Կենսաբանություն | - | - | - | - | - | - | 2 | 2 | 2 |
| Տեխնոլոգիա | 2 | 2 | 1 | 1 | 1 | 1 | 2 | - | - |
| ՆԶՊ | - | - | - | - | - | - | - | 1 | 1 |
| Ֆիզկուլտուրա | 3 | 2 | 2 | 2 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| Շախմատ | - | 2 | 2 | 2 | - | - | - | - | - |
| Դպրոցական բաղադրիչ | - | - | - | 1 | 1 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 |
| Ընդամենը | 20 | 24 | 26 | 28 | 29 | 31 | 34 | 35 | 35 |

**Աղյուսակ 3**

### Ռուսերենով ուսուցմամբ միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) ուսումնական պլան

| Ուսումնական առարկաներ | Շաբաթական ժամերի քանակը | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
| Ռուսաց լեզու | 4 | 8 | 6 | 8 | 6 | 3 | 3 | 3 | 2.5 | 3 | 3 | 3 |
| Ռուս գրականություն | - | - | - | - | - | 2 | 2 | 2 | 2 | 3 | 3 | 3 |
| Մայրենի (հայերեն) | 3 | 3 | 5 | 4 | 6 | 5 | - | - | - | - | - | - |
| Հայոց լեզու | - | - | - | - | - | - | 3 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| Գրականություն | - | - | - | - | - | - | 2 | 3 | 3 | - | - | - |
| Հայ գրականություն | - | - | - | - | - | - | - | - | - | 2 | 2 | 2 |
| Օտար լեզու | - | - | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| Մաթեմատիկա | 4 | 4 | 5 | 4 | 5 | 5 | - | - | - | - | - | - |
| Հանրահաշիվ | - | - | - | - | - | - | 3 | 3 | 3 | 2.5 | 2.5 | 2.5 |
| Երկրաչափություն | - | - | - | - | - | - | 2 | 2 | 2 | 1.5 | 1.5 | 1.5 |
| Ես եւ շրջակա աշխարհը | - | 1 | 1 | 2 | - | - | - | - | - | - | - | - |
| Բնագիտություն | - | - | - | - | 2 | 2 | - | - | - | - | - | - |
| Երաժշտություն | 2 | 1 | 1 | 1 | 1 | 0.5 | 0.5 | - | - | - | - | - |
| Տեխնոլոգիա | 2 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 2 | - | - | - | - | - |
| Կերպարվեստ | 2 | 1 | 1 | 1 | 1 | 0.5 | 0.5 | - | - | - | - | - |
| Հայաստանի աշխարհ. | - | - | - | - | - | - | - | - | 2 | - | - | - |
| Աշխարհագրություն | - | - | - | - | - | 1 | 1 | 2 | - | 1.5 | 1 | 1 |
| Հայրենագիտություն | - | - | - | - | 1 | - | - | - | - | - | - | - |
| Հայոց պատմություն | - | - | - | - | - | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 2 | 2 | 2 |
| Համաշխարհային պատմություն | - | - | - | - | - | 1 | 1 | 1 | 1 | 1.5 | 1 | 1 |

**Աղյուսակ 3**

### Ռուսերենով ուսուցմամբ միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) ուսումնական պլան

| Ուսումնական առարկաներ | Շաբաթական ժամերի քանակը | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
| Հայոց եկեղեցու պատմ. | - | - | - | - | 1 | 1 | 1 | 1 | 1 | - | - | - |
| Հասարակագիտություն | - | - | - | - | - | - | - | 1 | 1 | 1 | 1.5 | 2 |
| Ֆիզիկա | - | - | - | - | - | - | 2 | 2 | 2 | 3 | 3 | 3 |
| Քիմիա | - | - | - | - | - | - | 1 | 2 | 2 | 2 | 2 | 1 |
| Կենսաբանություն | - | - | - | - | - | - | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| Ինֆորմատիկա | - | - | - | - | - | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| ՆԶՊ | - | - | - | - | - | - | - | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Ֆիզկուլտուրա | 3 | 2 | 2 | 2 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 1.5 |
| Շախմատ | - | 2 | 2 | 2 | - | - | - | - | - | - | - | - |
| Դպրոցական բաղադրիչ | - | 1 | - | 1 | - | 1.5 | 0.5 | 0.5 | 1 | - | 0.5 | 2.5 |
| Ընդամենը | 20 | 24 | 26 | 28 | 29 | 31 | 34 | 35 | 35 | 34 | 34 | 34 |

**Աղյուսակ 4**

### Ազգային փոքրամասնությունների միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) ուսումնական պլան

| Ուսումնական առարկաներ | Շաբաթական ժամերի քանակը | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
| Հայոց լեզու | 3 | 5 | 5 | 4 | 6 | 5 | 3 | 2 | 3 | 2 | 2 | 2 |
| Գրականություն | - | - | - | - | - | - | 2 | 3 | 2 | - | - | - |
| Հայ գրականություն | - | - | - | - | - | - | - | - | - | 2 | 3 | 3 |
| Օտար լեզու | - | - | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| Մայրենի լեզու և գրակ. | 4 | 4 | 4 | 4 | 4 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| Ռուսաց լեզու | - | 2 | 2 | 3 | 3 | 3 | 3 | 2 | 3 | 2 | 2 | 2 |
| Մաթեմատիկա | 4 | 4 | 5 | 4 | 5 | 5 | - | - | - | - | - | - |
| Հանրահաշիվ | - | - | - | - | - | - | 3 | 3 | 3 | 2.5 | 2.5 | 2.5 |
| Երկրաչափություն | - | - | - | - | - | - | 2 | 2 | 2 | 1.5 | 1.5 | 1.5 |
| Ես եւ շրջակա աշխարհը | - | 1 | 1 | 2 | - | - | - | - | - | - | - | - |
| Բնագիտություն | - | - | - | - | 2 | 2 | - | - | - | - | - | - |
| Երաժշտություն | 2 | 1 | 1 | 1 | 1 | 0.5 | 0.5 | - | - | - | - | - |
| Տեխնոլոգիա | 2 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 2 | - | - | - | - | - |
| Կերպարվեստ | 2 | 1 | 1 | 1 | 1 | 0.5 | 0.5 | - | - | - | - | - |
| Հայրենագիտություն | - | - | - | - | 1 | - | - | - | - | - | - | - |
| Հայաստանի աշխարհ. | - | - | - | - | - | - | - | - | 2 | - | - | - |
| Աշխարհագրություն | - | - | - | - | - | 1 | 1 | 1.5 | - | 1 | 1 | 1 |
| Հայոց պատմություն | - | - | - | - | - | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 2 | 2 | 2 |
| Համաշխարհային պատմություն | - | - | - | - | - | 1 | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 |
| Հասարակագիտություն | - | - | - | - | - | - | - | 1 | 1 | 2 | 2 | 2 |
| Ֆիզիկա | - | - | - | - | - | - | 2 | 2 | 2 | 3 | 3 | 3 |
Մասարիկ համալսարանն ուսանողների քանակով եւ հեղինակությամբ երկրորդն է Չեխիայի Հանրապետությունում: Այն բաղկացած է 9 ֆակուլտետից, որոնք տեղակայված են Բռնո քաղաքի տարբեր հատվածներում: Քաղաքում ապրողները կես կատակ, կես լուրջ ասում են, որ ապրում են ուսանողների քաղաքում, քանի որ բնակիչների կեսից ավելին ուսանողներ են: Հայաստանի եւ Չեխիայի կրթական համակարգերի տարբերությունների մասին խոսելիս պետք է նշեմ ամենակարեւորը՝ տեսական եւ գործնական մեթոդների կիրառումը: Չեխական մոդելը միտված է ավելի շատ գործնական հմտությունների զարգացմանը: Օրինակ՝ մարդկային ռեսուրսների կառավարման դասընթացի շրջանակում նախատեսված էր պրակտիկա Վիեննայի ամենահեղինակավոր երկու կազմակերպություններում, որի ընթացքում ձեռք բերեցի բավականին կարեւոր մասնագիտական հմտություններ: Դասապրոցեսները կազմակերպվում են հիմնականում քննարկումների տեսքով: Աշխատանքի մեծ մասի հիմքում դրվում է ուսանողի նախաձեռնողականությունն ու պարտաճանաչությունը:

**- Որտե՞ղ եք ընդունող երկրում անցկացրել Ձեր ազատ ժամանակը, օգտվե՞լ եք արդյոք մշակութային կյանքից:**

- Չեխիայի Հանրապետությունը հայտնի է իր մշակութային հարուստ պատմությամբ: Չնայած նրան, որ դասերի խտության պատճառով քիչ էր ազատ ժամանակ լինում, բայց հիմնականում փորձում էինք այն օգտագործել երկիրն ավելի լավ ճանաչելու համար: Ժամանցային, պատմամշակութային վայրեր, թանգարաններ. սրանք էին հիմնական այն վայրերը, որոնք այցելում էի առաջին իսկ հնարավորության դեպքում: Քանի որ Էրազմուսը ենթադրում է ոչ միայն կրթություն, այլ նաեւ ճանապարհորդություններ, հետեւաբար մեզ համար կազմակերպվում էին ճանաչողական այցեր տարբեր եվրոպական երկրներ: Կարճ ասած՝ սա իրական հնարավորություն էր՝ անձամբ ծանոթանալ աշխարհի հետ:

**- Ի՞նչ խորհուրդ կտաք նրանց, ովքեր պատրաստվում են գնալ սովորելու այլ երկիր:**

- Հիմա հետադարձ հայացք գցելով՝ հասկանում եմ, որ այդ ժամանակահատվածը թերեւս ամենակարեւորն էր իմ կյանքում: Ի շնորհիվ Էրազմուսի՝ ես ձեռք բերեցի ինչպես մասնագիտական մեծ փորձ, գիտելիք եւ հմտություններ, այնպես էլ անմոռանալի հուշեր եւ ընկերներ աշխարհի տարբեր հատվածներից: Բացի այդ, երկրի սահմաններից դուրս ապրելով՝ դառնում ես ավելի ուժեղ եւ կայացած՝ որպես անհատ: Յուրաքանչյուր երիտասարդ պիտի գիտակցի, որ այն մեծ քայլ է թե՝ հետագա անձնական հաջողությունների, թե՝ պետություն ներկայացնելու տեսանկյունից: Եվրոպայում ներկայացնել երկիր եւ ցույց տալ աշխարհին մեր արժեհամակարգն ու ամենակարեւորը՝ քարտեզի վրա հազիվ երեւացող Հայաստանի տրամադրած մրցունակ կրթությունը, նույնքան կարեւոր է: Իրականում դժվարանում եմ բառերով նկարագրել այն կյանքը, որն ունեցել եմ այդ կես տարվա ընթացքում. այն լի էր եւբ դրական պահերով, եւբ դժվարություններով: Մյուս կողմից՝ մեծ հաղթանակները գտնվում են մեր վախերից այն կողմ: Պետք է համարձակ լինել, քանզի այս պարագայում ռիսկն արդարացված է:

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

# Դպրոցները պետք է վերածվեն զարգացման կենտրոնների

*սկիզբը՝ էջ 18*

Օրինակ՝ ինչքան հետաքրքիր կլիներ, եթե, ասենք, հայոց լեզվի եւ գրականության մասնագետը երկու օր այցելեր Իրան, լիներ Սաադիի ծննդավայր Շիրազ քաղաքում, տեսներ Սաադիի հայտնի Գուլեսթանն ու ծանոթանար հարեւան երկրում կրթական մոտեցումներին:

Այսպիսով՝ տվյալ մասնագետը կունենար մի քանի ձեռքբերում եւ բնականաբար ձեռքբերումներ կունենար նաեւ կրթական ապարատը: Ուսուցիչը մոտիկից կտեսներ Սաադիի հայրենիքը, որի մասին Ավետիք Իսահակյանը գրել է իր հայտնի ,Սաադիի վերջին գարունը, պատմվածքը ու երեխաներին ավելի բազմաբովանդակ կներկայացներ պատմվածքը: Թերեւս ամենակարեւորներից է նաեւ դասընթացների գործնական մասի ավելացումը: Աշակերտները պիտի կարողանան գործնականում կիրառել իրենց տեսական գիտելիքները, քանզի ինչպես հայտնի պոետ Սաադին էր ասում. *«Գիտության ծառն առանց գործածության նման է կոտրված ճղի»*: Ուսուցիչների հետ համատեղ բոլոր դպրոցներում պետք է աշխատեն նաեւ հոգեբաններ: Պետք է խրախուսել ու տարածել ուսուցչական սեմինարների կազմակերպման գործընթացները՝ տարբեր մասնագիտության մանկավարժների մասնակցությամբ: Բավականին կարեւոր ու տեղին կլինի, որ, օրինակ, կենսաբանություն կամ առաջին բուժօգնություն առարկային նվիրված սեմինարին մասնակցեն մաթեմատիկայի կամ հայոց պատմության մասնագետները: Սա կլրացնի մանկավարժների գիտելիքները: Շատ կարեւոր է նաեւ տնօրենների պատրաստվածության մակարդակի ստուգումը: Նրանք եւս գոնե տարին մեկ անգամ պիտի անցնեն վերապատրաստումներ: Պետք է վերանայել տնօրենների ընտրության եւ նշանակման ներկայիս գործող կարգը՝ վճռորոշ ձայն հատկացնելով մանկավարժական եւ ծնողական խորհուրդներին (ինչպե՞ս կարելի է ընդունել այն դեպքերը, երբ խորհուրդներում հայտնվում եւ տնօրեն են ընտրում դպրոցից հեռու, կրթական համակարգին ամբողջովին անտեղյակ անձինք):

Շատ լուրջ ուշադրություն է պետք դարձնել նաեւ ՀՀ հարեւան պետություններին ու նրանց քաղաքական, ներքաղաքական անցուդարձներին, որոնց, այո, կարծում եմ՝ մեր հասարակությունը դեռ դպրոցից պիտի ծանոթ լինի: Օրինակ՝ մենք որքա՞ն բան գիտենք ԻԻՀ-ի մասին, որը մեր հարավային հարեւանն ու մեզ հետ տնտեսական ու քաղաքական դարավոր պատմություն է անցել, կամ մենք ինչքանո՞վ ենք տեղյակ մեր արեւելյան հարեւան Ադրբեջանի մասին, թեկուզ հենց այս պատերազմի ֆոնին, մենք որքանո՞վ ենք տեղյակ ու պաշտպանված մեր այս թշնամուց: Կարծում եմ, որ դեռ դպրոցից պիտի իմանալ հարեւանին այնպես, ինչպես դեռ աչքը բացելուն պես իմանում ենք մեր թաղի կամ բակի հարեւաններին:

Քանի որ կրթության ոլորտից կարելի է ակնկալել արդյունք ավելի երկարաժամկետ հեռանկարում, ուստի կրթության ոլորտում առաջիկա իրականացվելիք բարեփոխումները պետք է լինեն գերակա: Վերոնշյալ առաջարկությունները ինքնանպատակ չեն, դրանք բխում են ազգային անվտանգության ապահովման խնդրից եւ առաջնահերթ են՝ վերջինիս ապահովման համար: Քանի որ կրթությունը այն եզակի ոլորտներից է, որտեղ ներդրված ռեսուրսի արտադրողականությունը չենք կարող ստանալ կարճ ժամկետում, ուստի վերոնշյալ առաջարկությունները կնպաստեն ավելի երկարաժամկետ հեռանկարում տեսնել արդյունք եւ կդառնան ազգային անվտանգության ապահովման հիմք: Կրթության ոլորտի ազդեցությունը կդրսեւորվի նաեւ ազգի ռազմավարական խնդիրների լուծման մեջ եւ կառաջնորդի մեզ տարբեր ոլորտների առջեւ ծառացած մարտահրավերներին դիմակայելու համար: Իմ գլխավոր կարգախոսը այս ոլորտում կլինի.

*«Ապագան մեր ձեռքերում է, եւ մենք ապագայի ձեռքերում ենք, ուստի ստեղծենք ապագա, որի ձեռքերում մենք կլինենք ապահով ու միասնական»:*

***Մխիթար ԳԱՍՊԱՐՅԱՆ***

Գրախոսություն

# Ուշացումով, բայց ոչ ուշացած խոսք մի պատմական պիեսի մասին

Հայաստանի համար բախտորոշ պատմական մի ժամանակահատվածի գեղարվեստական մարմնավորմանն է նվիրված Վահագն Դաբաղյանի *«Արծիվը»* պիեսը, որն ընթերցելու հաճույքն ապրեցի նրա լույսընծայումից շուրջ տասնհինգ տարի անց: Զարմանալի է, որ գրական հախուռն անցուդարձի մեջ նման ստեղծագործությունը չեն նկատել, եւ, ըստ այդմ, աշխատանքը հասու չի եղել ընթերցող լայն հասարակայնությանը:

Պիեսի հեղինակն ստեղծագործության թեմա է ընտրել, ըստ Ագաթանգեղոսի, հայոց դարձի ժամանակահատվածը, երբ Տրդատ թագավորի օրոք քրիստոնեությունը պետա-կան կրոնի կարգավիճակ է ստանում:

Անշուշտ, Հայաստանի համար կարեւոր այս իրադարձությունը եւ նրան առնչվող անցքերը հայ պատմագրության եւ գեղարվեստական գրականության մեջ համակող-մա-նիորեն արծարծվել են, եւ թվում է՝ այդ թեմային անդրադարձը գեղարվեստական նոր արժեք կամ պատմական անցքերի նոր մեկնաբանության չի կարող բերել:

Սակայն, դա միայն առաջին հայացքից:

Վ.Դաբաղյանը հանրահայտ սյուժետային հենքի վրա ստեղծել է յուրահատուկ պատում, որտեղ տեսնում ենք ժամանակաշրջանի կոլորիտը, Հայաստանի ռազմաքաղաքական կյանքի վեկտորական ուղղությունները, սիրո ինտրիգը պետական քաղաքականության մեջ, կրոնական ֆանատիզմը՝ հնի եւ նորի բախման սահմանագծին, դաժանությունն ու հանդուրժողականությունը՝ որպես գաղափարական հաղթանակի վճռական գործիքակազմ եւ այլն:

Պիեսի հեղինակը վարպետորեն խոսեցնում է կերպարներին, մտնում յուրաքանչյուր կերպարի տրամադրության, տրամաբանության եւ հոգեվիճակի մեջ, ստեղծում պատումի յուրահատուկ ընթացք՝ երկխոսությունների միջոցով՝ տալով ռեմարկային համեստ նշումներ: Հեղինակի տեսադաշտում պիեսի կերպարները տարաբնույթ հակասությունների մեջ են ինչպես իրենց, այնպես էլ միմյանց նկատմամբ. Տրդատը հակադրվում է Հռոմի կայսր Դիակղետիանոսին՝ Պարսկաստանի հետ նրա կնքած բարենպաստ դաշնագրի համար, հակասության մեջ է ինքն իր հետ՝ Հռիփսիմեի նկատմամբ հոգեկան տվայտանքը հաղթահարել չկարողանալու պատճառով, նրա հոգեկան անդորրը խաթարվում է Օտարականի գուշակություններից ու խորհուրդներից: (Օտարականը Տրդատի համար գուշակում էր աշխարհակալ բարձունք, առավել, քան Հռոմի գահը. կործանարար գուշակություն): Մյուս կողմից՝ Տրդատին եւ ամբողջ պետական համակարգին հակադրվում է հեթանոսական կրոնի գերագույն քուրմը՝ Արձանը: Պիեսում գործում են երեսունից ավելի կերպարներ, որոնք բաժանվում են երկու հակադիր բանակների՝ նոր վարդապետության՝ քրիստոնեության տարածման համակիրներ եւ հեթանոսական կրոնի արմատներին կառչած քրմական դաս:




Տրդատին մերժում է Հռիփսիմեն, Տրդատը վարազի կերպարանք է ստանում եւ խառնվում վարազների բոլուկին, Տրդատը Խոր վիրապից դուրս է բերում Գրիգորին (դեռեւս քրիստոնյա չդարձած Տրդատը ցուցաբերում է քրիստոնեական հանդուրժողականություն), Գրիգորը բուժում է Տրդատին, եւ վերջինս, ապավինելով Գրիգորի աստծուն, պետականորեն ընդունում է նոր կրոնը եւ անցնում նախկին դավանանքի եւ նրա արժեքների անխնա ոչնչացմանը:

Վահագն Դաբաղյանն այս դրվագները գեղարվեստորեն մատուցում է այնպես, ինչպես շարադրված է մեր պատմագրության էջերում:

Ո՞րն է դրամատուրգի կրեդոն:

Այստեղ է, որ պիեսը ձեռք է բերում պատմական եւ գեղարվեստական կարեւոր արժեք. այն գաղափարները, որոնք պիեսի հեղինակը հնչեցնում է հայոց մեծ քրմապետի՝ Արձանի շուրթերով, որքան մեզ հայտնի է, հնչում են առաջին անգամ: Թերեւս դա հենց դրամատուրգի դատողությունների կիզակետն է, որով արժեւորվում եւ մեծանում է հայոց վերջին քրմապետի կերպարը: Մեծ քրմապետը կասկածելի է համարում այն, որ Հռիփսիմյաց կույսերը ինքնակամ են եկել Հայաստան. նրանց ուղարկել է Հռոմի կայսր Դիոկղետիանոսը՝ Տրդատին հոգեպես բեկելու համար: Նախ, խորհում է քրմապետը, ինչպե՛ս կարող էին քրիստոնյա կույսերը ինքնուրույն դուրս գալ Հռոմի տիրույթներից, եւ կայսեր գերիզոր պետության պահապանները նրանց բռնել չկարողանային: Դա կազմակերպված ներխուժում էր Հայաստան՝ *«դավադիր ծրագրի»* իրագործման միջոց: Երկրորդ՝ եթե կույսերը փախել էին Հռոմի կայսեր հետապնդումից, ապա պետք է ապահով տեղ փնտրեին՝ մի տեսակ խուլ եւ սակավամարդ վայր, մինչդեռ նրանք *«բնակություն են հաստատում»* մայրաքաղաք Վաղարշապատում՝ բոլորի աչքի առաջ: Եվ վերջապես, եղբայրական ինչպիսի՞ սիրո դրսեւորում է ցուցաբերում Հռոմի կայսրը, երբ Տրդատին առաջարկում է Հռիփսիմեին կնության վերցնել (կարծես ինքն ի զորու չէր կույսին ընկճել):

Մեծ քրմապետը վստահ է, որ Դիոկղետիանոսի նենգ ծրագիրը Տրդատին մեջտեղից վերացնելն էր. կայսրը չէր կարող բացահայտ գործել, չէ՝ որ կայսերակերպ Տրդատն իր փոխարեն գոտեմարտել եւ հաղթել էր գոթերի արքային. ուրեմն այլ հնար է պետք Տրդատին խոցելու համար: Եվ ահա չքնաղ Հռիփսիմեն… (Ֆրանսիական թեւավոր խոսքն ասում է՝ *«Փնտրե՛ք կնոջը»*):

Սա հետաքրքիր գաղափար է, որ առաջ է քաշում եւ քրմապետի բերանով ազդարարում է Վահագն Դաբաղյանը: Գուցե ժամանակին (հինգերորդ դարում անգամ) պատմիչներն այս մասին իմացել են, սակայն քաղաքական դրդապատճառներով լռության քողի տակ են առել Հռոմի կայսեր դավադիր մտադրությունները):

Դրամատուրգի համակրանքը Հայոց մեծ քրմապետի կողմն է՝ որպես պատմական անձնավորության: Եվ այդ համակրանքը վարակում է ընթերցողին: Մեծ քրմապետն իր կրոնի, դավանանքի մոլեռանդ պաշտպանն է. նա պատրաստ է զոհաբերել անգամ որդուն՝ Զարեհին, պիեսում թափանցիկ ակնարկ կա առ այն, որ նա հեթանոսական հավատի սյուներն ամուր պահելու համար զոհաբերել է նույնիսկ իր կնոջը: Քրմապետն իր քրմական դասով ամբողջ Հայաստանում կռվում է Տրդատի քրիստոնյա բանակի դեմ, երբ վերջիններս անխնա ոչնչացնում էին հեթանոսական մեհյաններն ու թալանում բագինների գանձերը՝ բազմաստվածության տեղը դնելով միաստվածության գաղափարը: (Պատմությունը պարուրաձեւ կրկնվում է. 20-րդ դարի սկզբին բոլշեւիկներն այդպես անխնա պղծում եւ թալանում էին քրիստոնեական տաճարներն ու եկեղեցիները՝ միաստվածության տեղ դնելով անաստվածության գաղափարը):

*շարունակությունը՝ էջ 21*

Ռուսական արվեստի թանգարան

# Յուրաքանչյուր այցելու այստեղ գտնում է իր ծրագիրը

Ռուսական արվեստի թանգարանը (պրոֆեսոր Ա. Աբրահամյանի հավաքածու) իր հարուստ հավաքածուով եւ հետաքրքիր միջավայրով մշակութային անկրկնելի օջախ է: Թանգարանն իրականացնում է բազմապիսի եւ բազմաբնույթ ծրագրեր՝ ցուցադրություններ, միջազգային համագործակցության ծրագրեր, գիտական գործունեություն, հետազոտություններ, մարզային արտագնա ծրագրեր, հոբելյանական, գրական, երաժշտական միջոցառումներ, համերգներ, կինոդիտումներ, դասախոսություններ, քննարկումներ, կրթական ծրագրեր՝ դպրոցականների եւ երիտասարդների համար:

Ռուսական արվեստի թանգարանը երեխաների, երիտասարդների, տարբեր տարիքային խմբերի եւ զբոսաշրջիկների սիրելի վայրերից է: Դպրոցական աբոնեմենտային ծրագրի շրջանակում թանգարան են այցելում պետական հանրակրթական դպրոցների 1-12-րդ դասարանների աշակերտները, ուսուցիչները: Բացի հանրակրթական դպրոցներից թանգարանը համագործակցում է նաեւ մասնավոր դպրոցների, մանկապարտեզների, նախակրթական հաստատությունների հետ:

*«Հետազոտելով դպրոցներում ուսուցանվող ծրագրերը՝ մենք մշտապես մշակում եւ զարգացնում ենք թանգարանի կրթական ծրագրերը՝ ապահովելով ուսումնական գործընթացների շարունակականությունը: Այսօր թանգարանում գործում են բազմաբնույթ կրթական ծրագրեր, որոնց միջոցով թանգարանի բոլոր տարիքի այցելուները հաղորդակցվում են արվեստի հետ, գիտելիքներ ձեռք բերում եւ բացահայտում Ռուսական արվեստի թանգարանի բացառիկ հավաքածուն»*,- նշել է թանգարանի տնօրեն **Մարինե Մկրտչյանը** եւ հավելել, որ յուրաքանչյուր այցելու թանգարանում գտնում է իր ծրագիրը:

Այսպիսով՝ ***«Տարվա եղանակներ»*** խաղ-էքսկուրսիան նախատեսված է 1-4-րդ դասարանի երեխաների համար: Թանգարանում ներկայացված բնանկարների միջոցով ընդհանուր գիտելիքներ են փոխանցվում տարվա չորս եղանակների, ինչպես նաեւ բնության երեւույթների վերաբերյալ: Ծրագրի գործնական մասում երեխաները հեքիաթ են լսում, այնուհետեւ՝ ստեղծագործում են Պ. Չայկովսկու *«Տարվա եղանակները»* երաժշտության ներքո:

***«Կենդանաբանական այգի»*** ծրագիրը նախատեսված է նախադպրոցական եւ տարրական դասարանի երեխաների համար: Բ. Գրիգորեւի *«Կենդանաբանական այգի»* նկարի միջոցով նրանք ծանոթանում են կենդանական աշխարհի, նրանց բնակության վայրերի հետ, սովորում են սիրել եւ խնամել ինչպես կենդանիներին, այնպես էլ շրջակա միջավայրն ու բնությունը: Ծրագրի գործնական մասում մասնակիցները տվյալ թեմայի համատեքստում խաղում են տարբեր ինտերակտիվ խաղեր՝ ամրապնդելով ստացած գիտելիքները:



***«Կռահի՛ր նկարը»*** ծրագիրը նախատեսված է երեխաների, մեծահասակների եւ ընտանիքների համար: Ծրագրի նպատակն է ծանոթացնել թանգարանային մշակույթին եւ էթիկային, գիտելիքներ հաղորդել արվեստի տեսակների, տեխնիկաների եւ ժանրերի վերաբերյալ: Գործնական հատվածում յուրաքանչյուրը ընտրում է ցուցադրությունից մեկ առարկա եւ ազատորեն վերարտադրում այն: Ծրագրի ավարտին մասնակիցները պետք է կռահեն, թե ո՞ր նկարն են վերարտադրել իրենց ընկերները:

*շարունակությունը՝ էջ 21*

# Յուրաքանչյուր այցելու այստեղ գտնում է իր ծրագիրը

*սկիզբը՝ էջ 20*

***«Արվեստ. տեսակներ, ժանրեր, տեխնիկաներ»*** ծրագիրը նախատեսված է 8-12-րդ դասարանի պատանիների համար: Թանգարանի հավաքածուի հիման վրա երեխաներին մատուցվում է արվեստի տեսական հիմունքների վերաբերյալ գիտելիքներ, որոնք ներառված չեն հանրակրթական դպրոցական ծրագրում: Գործնական մասում ինտերակտիվ խաղերի միջոցով մասնակիցները սովորում են տարբերել արվեստի տեսակները, ժանրը եւ տեխնիկաները:

***«Փազլ, ուրվագիծ, նկարագրություն»*** ծրագիրը նախատեսված է 5-8-րդ դասարանի սաների համար: Այն ուղղված է երեխաների մոտ թանգարան այցելելու եւ արվեստի ստեղծագործությունները ընկալելու մշակույթի զարգացմանը: Գործնական մասում ինտերակտիվ խաղերի միջոցով, որոնք հիմնված են թանգարանային ցուցադրության վրա, երեխաների մոտ զարգանում է տեսողական հիշողությունը եւ արվեստի ստեղծագործության ընկալումը:

***«Առարկան դառնում է նկար»*** ծրագիրը նախատեսված է 2-5-րդ դասարանի սաների համար: Թանգարանում առկա 20-րդ դարի ռուս նկարիչների ստեղծագործությունների հիման վրա ներկայացվում է նատյուրմորտի ժանրն ու առանձնահատկությունները: Գործնական մասում մասնակիցները հավաքում են նատյուրմորտի կոլաժներ:

***«Ռուսական ավանդական նախշեր»*** ծրագիրը նախատեսված է 6-14 տարեկան երեխաների համար: Ծրագրի նպատակն է մասնակիցներին ծանոթացնել եւ գիտելիքներ հաղորդել ռուսական ավանդական զարդանախշերի վերաբերյալ: Գործնական մասում երեխաները կավե առարկաները նկարազարդում են ռուսական ազգային նախշերով՝ իբրեւ հուշանվեր տանելով իրենց հետ:

***«Իմ կերտած դիմանկարը»*** ծրագիրը նախատեսված է 8-14 տարեկան երեխաների համար: Ինտերակտիվ խաղի միջոցով մասնակիցներն ամրապնդում են իրենց ստացած գիտելիքները՝ դիմանկարի ժանրի, նրա ստեղծման պատմության եւ տեսակների վերաբերյալ:

***«Խոսող քանդակներ»*** ծրագիրը նախատեսված է 8-14 տարեկան սաների համար: Ծրագրի ընթացքում մասնակիցները ծանոթանում են քանդակի ձեւերին, տեսակներին եւ նյութերին: Թանգարանի հավաքածուի հիման վրա մասնակիցները հարց ու պատասխանի միջոցով ակտիվ վերլուծում են ստացած գիտելիքները, ապա գործնական մասում հնարավորություն ունենում ազատ ստեղծագործել՝ որպես նյութ կիրառելով ծեփոնը:

***«Ծաղկային հեքիաթ»*** կրթական ծրագիրը նախատեսված է ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների ժամանցի համար: Թանգարանում առկա ռուս նկարիչների վրձնած ծաղկային կոմպոզիցիաների միջոցով մասնակիցները պատկերացում են ստանում ծաղիկների (տեսակների, ծաղկման եղանակային պայմանների, աճման վայրերի եւ այլն) եւ դրանց հետ կապված ավանդույթների, հեքիաթների մասին: Գործնական մասում մասնակիցները չորացրած ծաղիկներով պատրաստում են գեղեցիկ կոմպոզիցիաներով բացիկներ՝ որպես հուշանվերներ տանելով իրենց հետ:

***«Լինոփորագրության վարպետության դաս»*** ծրագրի շրջանակում թանգարանում ինտերակտիվ շրջայցից հետո նկարիչ-համադրող Ս. Հովհաննիսյանը ծանոթացնում է լինոփորագրության տեխնիկայի պատմությանը եւ հմտություններին, այնուհետեւ՝ մասնակիցները թանգարանում ցուցադրված ստեղծագործությունների հիման վրա վերատպում են ռուս մեծ վարպետների ստեղծագործությունները:

Linocut-ը համարվում է բարձր տպագրության տեխնիկա, որը տպագիր գրաֆիկայի մի տեսակ է: Պատկերը կտրվում է լինոլիումից եւ տպագրվում մի կտոր թղթի վրա: Այս տեխնիկան առաջին անգամ հայտնվել է 20-րդ դարի սկզբին: Ներկա պահին linocut-ը լայնորեն կիրառվում է տարբեր ոլորտներում՝ մանկական ստեղծագործությունից մինչեւ մասնագիտական դիզայն: Այս տեխնիկայի առավելությունն այն է, որ բավականին պարզ ճանապարհով կարելի է ստանալ թե՛ սիրողական եւ թե պրոֆեսիոնալ պատկերներ:

Ռուսական արվեստի թանգարանի առաքելությունն է հասարակության տարբեր խմբերի համար վերածվել կրթական, մշակութային եւ ինտերակտիվ ժամանցի կենտրոնի՝ իր հավաքածուի գլուխգործոցների տարաբնույթ մատուցման միջոցով:

*«Այս համատեքստում, չափազանց կարեւորվորում ենք թանգարանի նորարարական նախագծերը, որի մեկնարկը տրվել է անցյալ տարի «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի շրջանակում՝ «Մեկ գլուխգործոցի վիրտուալ աշխարհում» խորագիրը կրող նախագծով»*,- տեղեկացրել է թանգարանի տնօրեն Մարինե Մկրտչյանը՝ շեշտելով, որ ՀՀ թանգարանների պատմության մեջ սա առաջին փորձն է, որտեղ այցելուն հայտնվում է հենց նկարի «ներսում»:

VR տեխնոլոգիայի միջոցով դիտողները վիրտուալ իրականության ակնոցի միջոցով հայտնվում են Բ. Գրիգորեւի *«Կենդանաբանական այգի»* գեղանկարի *«ներսում»* (նկարի հիման վրա նախապես ստեղծված 3D միջավայրում), *«զբոսնում են»* այնտեղ, *«հանդիպում»* նկարի հերոսներին եւ ծանոթանում ստեղծագործության պատմությանը նախընտրած լեզվով (հայերեն, անգլերեն, ռուսերեն): VR տեխնոլոգիայի ներդրումը թանգարանում այցելուների հոսքի մեծ խթան է, քանզի արվեստի մատուցման այս նորարար փոխակերպումն առավել հետաքրքիր եւ գրավիչ է դարձնում 21-րդ դարի թանգարանը:

Թանգարանը տարբեր ձեւաչափերով ակտիվ համագործակցում է նաեւ մարզային մշակութային կենտրոնների եւ կառույցների հետ, այդ թվում նաեւ Լոռու Դեբեդ համայնքում գործող *«ՔՈԱՖ»* սմարթ կենտրոնի հետ: Այս տարի VR ակնոցով եւ կրթական ծրագրերով, թանգարանի աշխատակիցները կշրջեն նաեւ մարզերում, կլինենք «ՔՈԱՖ» սմարթ կենտրոնում, Վանաձորի Ստեփան Զորյանի տուն-թանգարանում, մարզային եւ համայնքային մշակութային այլ օջախներում:





***Ալլա ՍԵՐՈԲՅԱՆ***

# Ուշացումով, բայց ոչ ուշացած խոսք մի պատմական պիեսի մասին

*սկիզբը՝ էջ 20*

Պիեսում կենտրոնական կերպար է Օտարականը, որի զրույցները Տրդատի հետ ընթանում են կենսափիլիսոփայության քողի տակ, իսկ Բրուտի հետ երկխոսություններում ընդգծվում է նրա միստիկական հայեցողությունը:

Օտարականը Տրդատին խորհուրդ է տալիս. աշխարհակալ դառնալու համար պետք է հանդիսատես նվաճել, անցնել բոլոր սահմանները, որոնք հսկում են անգամ աստվածները: Եվ պետք է հանդիսատեսին խոստանալ ազատություն. այդ գաղափարով կարելի է ստրկացնել աշխարհը… *«Ազատություն,ահա կամովին եւ հիմնովին ստրուկ դառնալու լավագույն հնարավորությունը…»*: Օտարականի կերպարի միստիկական քողն ավելի է թանձրանում Բրուտի հետ երկխոսություններում. նա փնտրում է *«մի փոքրիկ անկյուն, որը նման չլինի դրախտին, նման չլինի դժոխքին, ուր ինքը կարողանա ծվարել ու հավերժ հեկեկալ…»*: Բրուտը խորհրդանշում է Աստծո կերպարը, որ հանդուրժում է ճշմարտության դեմ պայքարող Օտարականին եւ նրան տեղ է տալիս. *«Իմ տան դռները բաց են բոլորի առջեւ: Հանգի՛ստ առ, Մարկո՛ս»*: Բրուտի վերջին բառերը բացահայտում են Օտարականի ծագումնաբանությունը. նա Դիոկղետիանոսի պատվիրակն է, որ ձտգում էր մոլորեցնել Տրդատին:

Պիեսում պատմական կնճռոտ դարաշրջանի համապատկերին առանձնահատուկ գունագեղություն են հաղորդում մեծ քրմապետի որդու՝ Զարեհի եւ Նանեի սիրո դրվագները, Նանեի մտորումներն ու սիրո զեղումները, Զարեհի դյուրաթեքությունը, որ *«սիրո հողմերից տարուբերվում է կանանց ծովի մեջ»* ու գայթակղվում Հռիփսիմեի գեղեցկությամբ եւ այլն:

Դրամատուրգը հմտորեն օգտվել է բանահյուսական պատառիկներից ու Գողթան երգերից՝ դրանք ձուլելով պատումի հենքին, նոր լիցք ու հմայք հաղորդելով սրընթաց դեպքերին:

Պիեսի վերնագիրը խորհրդանշում է հայոց վերջին քրմապետին, որ արծվենի թեւերով պաշտպանում էր իր դավանանքի հոգեւոր տիրույթները…

Մեր կարծիքով՝ պիեսն ընթերցողին մղում է նոր հայացքով վերագնահատելու քրիստոնեության մուտքի ժամանակաշրջանը, նոր դիտանկյունից ըմբռնելու Հռոմի կայսեր վարած քաղաքականությունը փոքր ազգերի նկատմամբ, յուրովի զգալու Տրդատ թագավորի գործունեության շարժառիթները, հիանալու Հայոց մեծ քրմապետի կրոնապաշտության եւ հայրենասիրության անմնացորդ նվիրվածությամբ, ըստ արժանվույն գնահատելու արքայի եւ մեծ քրմապետի կողմնակիցների բռնած դիրքը դավանաբանական պայքարի ծիրում:

Պիեսում գործում են մի շարք կերպարներ՝ Գուսան, Մայրապետ, Շուկայի կանայք, Աշխեն, Խոսրովիդուխտ, Սենեկապետ, Գուշակ, Մոկաց իշխան, որոնք տարբեր կողմերից լրացնում են Տրդատին՝ ամբողջացնելով նրա մտորումները, խոհերը, գործողությունները՝ մեծ նպատակին հասնելու համար, իսկ այդ նպատակը նոր հավատքի տաճարի կառուցումն է մարդկային հոգիներում: Առանձնահատուկ գծերով են օժտված մեծ քրմապետի զինակիցների՝ Ցուլի եւ մյուս քրմերի կերպարները, որոնք իրենց կեցվածքով նվիրվածու-թյան եւ հավատարմության դասական օրինակ են տալիս շրջապատին:

Պատմական անցքերին անդրադարձը դրամատուրգից մեծ պատասխա-նատվություն է պահանջում. պիեսի հեղինակը կարողացել է ոչ միայն ճշմարտացիորեն արտացոլել պատմական իրադարձությունները, այլեւ սեփական դատողությունների պրիզմայով մեկնաբանել պատմական անցքերի ենթատեքստերը, իրադարձությունների խաչմերուկներում հայտնված պատմական կերպարների նպատակներն ու դրանց հասնելու միջոցները, մանավանդ որ այդ իրադարձություններն ու կերպարները վճռական դեր են խաղում ազգային քաղաքակրթության ու ազգային ճակատագրի համատեքստում:

Արժանին մատուցելով պիեսի հեղինակին՝ բարձրարժեք ստեղծագործության համար՝ խորհուրդ կտայինք նրան՝ այս թեման խորացնել եւ ընթերցողին ներկայացնել լայնակտավ ուսումնասիրություն՝ վիպական հյուսվածքով:

***Լալիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ***
***Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր***

Փորձի՛ր լրացնել

# Գրականության շուրջ



**Ուղղահայաց**

**1.** 5-րդ դարի հայ պատմիչ Փավստոս Բուզանդի հայտնի ժողովրդական ավանդազրույցը՝ *«...եւ Շապուհ»:* **2.** Հովսեփ Վարդանյանի Հայատառ թուրքերենով գրած վեպը: **3.** Ռուս բանաստեղծ, առակագիր (*«Գայլն ու գառը», «Ճպուռն ու մրջյունը»*): **4.** Հ. Թումանյանի պոեմներից: **5.** Բանաստեղծական ժանր: **6.** *«Ալպիական մանուշակ»* պատմվածքի հեղինակը: **10.** Բրիտանացի գրող, բազմաթիվ դեդեկտիվների եւ պիեսների հեղինակ՝ Սայմոն...: **13.** Հայ գրող, արձակագիր *«Երկրի պապերը»* գրքի հեղինակ՝ ... Պետրոսյան: **14.** ֆրանսիացի գրող, *«Մատեո Ֆալկոնե»* նովելի հեղինակ՝ Պրոսպեր...: **15.** Ամերիկացի հրապարակախոս, գրող-ֆանտաստ՝ Ռոլանդ...: **16.** *«Գեւորգ Մարզպետունի»* պատմավեպի հերոս: **19.** Անգլիացի մտածող, գրող, ով գլխատվել է Հենրիխ 8-րդ թագավորի հրամանով, Թոմաս...: **20.** Ֆրանսիացի եւ ամերիկացի գրող, լրագրող՝ ...Կյուրի: **24.** Ամերիկացի ժամանակակից գրող, Պուլիտցերյան մրցանակի դափնեկիր՝ Շիրլի Էնն...: **27.** Հայ կին բանաստեղծ եւ արձակագիր (անունը): **29.** Հայ բանաստեղծ, *«Անմահները հրամայում են»* ժողովածուի հեղինակ: **31.** Ամերիկացի դրամատուրգ եւ սցենարիստ՝ ...Սայմոն: **33.** Ֆրեդերիկ..., ամերիկացի բանաստեղծ: Ճանաչվել է երկրի լավագույն բանաստեղծը՝ կիրառելով հանգավորման արտասովոր եղանակներ: **37.** գործող անձ Օլբիի *«Ինչ էր պատահել գազանանոցում»* պիեսում: **41.** Իռլանդացի եւ ամերիկացի գրող, հայտնի *«Բոռ»* վեպի հեղինակը՝ Էթել...: **42.** Չեխ գրող, պատմաբան՝ Ագիզմունդ...: **43.** Հայ արձակագիր (*«Այրվող այգեստաններ», «Ծաղկած փշալարեր»*): **44.** *«Թիմուրը եւ իր ջոկատը»* վեպի հեղինակ: **46.** Ամերիկացի ժամանակակից վիպասան, արձակագիր, ով ճանաչման է արժանացել է *«Ողջ լույսը, որ մենք չենք կարող տեսնել»* վեպի շնորհիվ (2014), Էնթոնի...: **47.** Հեքիաթի ձեւով ժողովրդական զրույց, որի հիմքում ընկած է լինում իրական դեպք: **50.** Ամերիկացի դրամատուրգ, ով *«Հրաշագործ կինը»* դրամայի համար արժանացել է *«Թոնի»* մրցանակաբաշխության դափնեկրի, Ուիլյամ...: **51.** Ֆիլիպինցի դրամատուրգ, ազգային դրամայի հիմնադիրը, *«Մեկ թշնամական փամփուշտ»* երկի հեղինակ՝ Խուան...: **53.** Հայ գրող, *«Մայիս»* վեպի հեղինակ; **54.** Շիրվանզադեի *«Քաոս»* վեպի հերոսներից: **55.** Ամերիկացի գրող, *«Աստղերն են մեղավոր», «Թղթե քաղաքներ»* վեպերի հեղինակ՝ Ջոն...: **56.** Բրիտանացի գրող՝ Դորեթի..., ում վեպերը թարգմանվել են բազմաթիվ լեզուներով: **57.** Միջնադարի իտալացի մեծ գրող *«Աստվածային կատակերգություն»* գրքի հեղինակ՝ ...Ալիգիերի:

**Հորիզոնական**

**7.** Հայ գրող, անվանի դրամատուրգ, *«Հին աստվածներ պատմական դրամայի հեղինակ»:* **8.** Ֆրանսիացի գրող՝ *«Թերեզ Ռաքեն», «Սիրո էջ»* վեպերի հեղինակ: **8.** 19-րդ դարի ռուս պատմաբան, գրող, ով հանդիսացել է հայ եւ հույն ժողովրդների պատմության եւ մշակույթին նվիրված ռուսալեզու մի շարք աշխատությունների հեղինակ,Սերգեյ...: **11.** Ռուս գրող, *«Եվգենի Օնեգին»* չափածո վեպի հեղինակ: **12.** Հայ գուսան, ժամանակակից գուսանական երգարվեստի սկզբնավորող: **17.** Ամերիկացի գրող եւ կենսագիր՝...Այզեքսոն: **18.** Հովսեփ Շիշմանյանի գրական կեղծանունը: **21.** Միջնադարյան հայ մեծ բանաստեղծ: **22.** Հովհաննես Շիրազի պոեմներից՝ *«... եւ Խաչեզարե»:* **23.** Միքայել Նալբանդյանի բանաստեղծություններից: **25.** Գրական ժանր: **26.** Նորվեգացի դրամատուրգ Հենրիկ Իբսենի *«Ուրվականներ»* դրամայի հերոս: **28.** Գրական ժանր: **30.** Ամերիկացի գրող, ում վեպերը թարգմանվել է աշխարհի 24 լեզուներով՝ Մայքլ...: **32.** Ռուս խորհրդային բանաստեղծ, *«Աննա Սնեգինա», «Պուգաչով»* պոեմների հեղինակ՝ Սերգեյ...: **34.** Ֆրանսիայի դեդեկտիվ ժանրի ճանաչված գրող, *«Դեղին սենյակի գաղտնիքը», «Օպերայի ուրվականը»* վեպերի հեղինակ՝ Գաստոն...: **35.** Հայ գրող, գրականագետ, Երեւանի առաջին պետական թատրոնի տնօրեն (1928-1931) Գեւորգ...: **36.** Ռուս խորհրդային գրող, ժուռնալիստ՝ Միխայիլ...: **38.** Հայ բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, Մխիթարյան միաբանության անդամ (1838)՝ Ղեւոնդ...: **39.** Մ. Արազու պատմվածքներից: **40.** Ամերիկացի գրող եւ կենսաքիմիայի պրոֆեսոր, ով հայտնի է իր գիտաֆանտաս եւ հանրամատչելի գրքերով, Այզեկ...: **44.** *«Ամպրոպն եմ սանձում»* վեպի հեղինակը: **45.** Ֆրանսիացի կին գրող Ժորժ Սանդի վեպերից: **48.** Ամենայն հայոց մեծ բանաստեղծ, ում նախաձեռնությամբ Թիֆլիսում ստեղծվեց *«Վերնատուն»* գրական խմբակը: **49.** Ամերիկացի գրող-ֆանտաստ, ում համարում են նաեւ *«գրող-ֆանտաստների դեկան»*՝Ռոբերտ...: **50.** Ամերիկացի գրող, փաստաբան, ով հայտնի է իր հանրաճանաչ իրավաբանական թրիլերներով, Ջոն...: **52.** Արեւմտահայ գրող (անունը), ում գրական կեղծանունն է Երուխան: **55.** Հայ բանաստեղծ՝ Աշոտ...: **58.** Ֆիրդուսու ստեղծագործության հերոս: **59.** Հայ գրող, մանկավարժ, *«Հազարան բուլբուլ» «Անահիտ»* հեքիաթների հեղինակ: **60.** Ամերիկացի ֆանտաստ գրող (1921-1975)՝ Ջեյմս...: **61.** ֆրանսիացի գրող, *«խորհրդավոր կղզին», «Նավապետ Գրանտի որդիները»* վեպերի հեղինակը:

***Կազմեց Վոլոդյա ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ***

# «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը հայտարարում է մրցույթ

*«Հեծանվային սպորտ», «Ծանրամարտ», «Թենիս», «Հանդբոլ»* առարկաների դասախոսների թափուր տեղերի համար:

**Աշխատանքային ժամերը**՝ ըստ դասացուցակի:

**Աշխատանքի նկարագրությունը՝**

*- առարկայական ծրագրի մշակում,*

*- դասախոսությունների վարում,*

*- գործնական եւ/կամ լաբորատոր պարապմունքների վարում,*

*- ռեֆերատների, ստուգողական գրավոր աշխատանքների, ամփոփիչ ատեստավորման աշխատանքների ընդունում եւ ստուգում,*

*- մասնակցություն ամբիոնի գիտական, կրթական ծրագրերի մշակմանը, մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպմանը, մասնակցություն ամբիոնի առարկայական հանձնաժողովների աշխատանքներին:*

**Պաշտոնի հավակնորդին ներկայացվող նվազագույն պահանջները՝**

*- Բարձրագույն կրթություն՝ մասնագիտական որակավորմամբ (դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոսի կրթական աստիճան),*

*- Առնվազն 3 տարվա մարզչամանկավարժական կամ գիտամանկավարժական գործունեության փորձ,*

*- Հայերեն լեզվի գերազանց իմացություն,*

*- Գիտական կոչման եւ/կամ աստիճանի առկայությունը կդիտվի որպես առավելություն,*

*- Օտար լեզուների իմացությունը կդիտվի որպես առավելություն,*

*- Համակարգչային հմտությունները կդիտվեն որպես առավելություն,*

*- Աշխատանքի կազմակերպման, պլանավորման եւ առաջնահերթությունների սահմանման հմտություններ,*

*- Պատասխանատվության բարձր զգացում,*

*- Խիստ կարգապահություն,*

*- Հաղորդակցվելու ունակություն,*

*- Թիմային աշխատանքի հմտություններ:*

**Դիմելու վերջնաժամկետը՝ 10.08.2021թ.**

**Դիմելու ընթացակարգը՝** սույն մրցույթով հետաքրքրված եւ հայտարարության մեջ նշված պահանջներին համապատասխանող անձինք կարող են իրենց ինքնակենսագրությունն (**CV**) ուղարկել **hr@sportedu.am** էլեկտրոնային հասցեին:

Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունն անցած թեկնածուները:

*«Քաղաքագիտություն», «Հայոց պատմություն», «Սոցիոլոգիա», «Հակակոռուպցիոն քաղաքականություն» , «Փիլիսոփայություն»* առարկաների դասախոսների թափուր տեղերի համար:

**Աշխատանքային ժամերը**՝ ըստ դասացուցակի:

**Աշխատանքի նկարագրությունը՝**

*- առարկայական ծրագրի մշակում,*

*- դասախոսությունների վարում,*

*- գործնական եւ/կամ լաբորատոր պարապմունքների վարում,*

*- ռեֆերատների, ստուգողական գրավոր աշխատանքների, ամփոփիչ ատեստավորման աշխատանքների ընդունում եւ ստուգում,*

*- մասնակցություն ամբիոնի գիտական, կրթական ծրագրերի մշակմանը, մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպմանը, մասնակցություն ամբիոնի առարկայական հանձնաժողովների աշխատանքներին:*

**Պաշտոնի հավակնորդին ներկայացվող նվազագույն պահանջները՝**

*- Բարձրագույն մասնագիտական կրթություն՝ դիպլոմավորված մասնագետ որակավորմամբ կամ մագիստրոսի կրթական աստիճան),*

*- Առնվազն 3 տարվա գիտամանկավարժական գործունեության կամ կառավարման ոլորտի մասնագիտական գործունեության փորձ,*

*- Հայերեն լեզվի գերազանց իմացություն,*

*- Գիտական կոչման եւ/կամ աստիճանի առկայությունը կդիտվի որպես առավելություն,*

*- Օտար լեզուների իմացությունը կդիտվի որպես առավելություն,*

*- Համակարգչային հմտությունները կդիտվեն որպես առավելություն,*

*- Աշխատանքի կազմակերպման, պլանավորման եւ առաջնահերթությունների սահմանման հմտություններ,*

*- Պատասխանատվության բարձր զգացում,*

*- Խիստ կարգապահություն,*

*- Հաղորդակցվելու ունակություն,*

*- Թիմային աշխատանքի հմտություններ:*

**Դիմելու վերջնաժամկետը՝ 10.08.2021թ.**

**Դիմելու ընթացակարգը՝** սույն մրցույթով հետաքրքրված եւ հայտարարության մեջ նշված պահանջներին համապատասխանող անձինք կարող են իրենց ինքնակենսագրությունն (**CV**) ուղարկել **hr@sportedu.am** էլեկտրոնային հասցեին:

Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունն անցած թեկնածուները:

*«1-ին բուժօգնություն», «Կինեզիոթերապիա», «Կենսամեխանիկա»* առարկաների դասախոսների թափուր տեղերի համար:

**Աշխատանքային ժամերը**՝ ըստ դասացուցակի:

**Աշխատանքի նկարագրությունը՝**

*- առարկայական ծրագրի մշակում,*

*- դասախոսությունների վարում,*

*- գործնական եւ/կամ լաբորատոր պարապմունքների վարում,*

*- ռեֆերատների, ստուգողական գրավոր աշխատանքների, ամփոփիչ ատեստավորման աշխատանքների ընդունում եւ ստուգում,*

*- մասնակցություն ամբիոնի գիտական, կրթական ծրագրերի մշակմանը, մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպմանը, մասնակցություն ամբիոնի առարկայական հանձնաժողովների աշխատանքներին:*

**Պաշտոնի հավակնորդին ներկայացվող նվազագույն պահանջները՝**

*- Բարձրագույն մասնագիտական կրթություն՝ դիպլոմավորված մասնագետ որակավորմամբ կամ մագիստրոսի կրթական աստիճան (ցանկալի է բուժական գործի ոլորտում),*

*- Առնվազն 3 տարվա գիտամանկավարժական գործունեության կամ պրակտիկ գործունեության մասնագիտական փորձ,*

*- Հայերեն լեզվի գերազանց իմացություն,*

*- Գիտական կոչման եւ/կամ աստիճանի առկայությունը կդիտվի որպես առավելություն,*

*- Օտար լեզուների իմացությունը կդիտվի որպես առավելություն,*

*- Համակարգչային հմտությունները կդիտվեն որպես առավելություն,*

*- Աշխատանքի կազմակերպման, պլանավորման եւ առաջնահերթությունների սահմանման հմտություններ,*

*- Պատասխանատվության բարձր զգացում,*

*- Խիստ կարգապահություն,*

*- Հաղորդակցվելու ունակություն,*

*- Թիմային աշխատանքի հմտություններ:*

**Դիմելու վերջնաժամկետը՝ 10.08.2021թ.**

**Դիմելու ընթացակարգը՝** սույն մրցույթով հետաքրքրված եւ հայտարարության մեջ նշված պահանջներին համապատասխանող անձինք կարող են իրենց ինքնակենսագրությունն (**CV**) ուղարկել **hr@sportedu.am** էլեկտրոնային հասցեին:

Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունն անցած թեկնածուները:

## Նախորդ համարի խաչբառի պատասխանները

**Ուղղահայաց**

**1.** Կառնավալ, **2.** Մանաս, **3.** Նամարդ, **4.** Թամարա, **5.** Դուման, **6.** Հալաբյան, **9.** Թաս, **10.** Թեմ, **12.** Նաղարա, **13.** Կաբարե, **15.** Ոլորում, **18.** Իդիլիա, **23.** Տրիսին, **24.** Կապիտալ, **26.** Լագաշ, **28.** Նովել, **29.** Կրկես, **33.** Բորյան, **35.** Սիսիան, **38.** Ամարաս, **39.** Արագած, **41.** Ջառամյալ, **42.** Միրաքյան, **47.** Բեռնար, **48.** Դյուրեր, **50.** Ապտակ, **51.** Սազ, **52.** Կետ, **53.** Ջինին:

**Հորիզոնական**

**7.** Բագդասար, **8.** Մամուլյան, **11.** Աթայան, **13.** Կերալա, **14.** Վարոս, **16.** Սալամ, **17.** Նիոբե, **19.** Մամոնա, **20.** Գնա, **21.** Արի, **22.** Ապիկար, **25.** Բուշ, **27.** Շանել **29.** Կիո, **30.** Մատիս, **31.** Օպերա, **32.** Դավիթ, **33.** Բալիս, **34.** Ստրես, **36.** Գոշ, **37.** Պալատ, **40.** Սին, **43.** Բալյան, **44.** Աիա, **45.** Ալտ, **46.** Գրիշին, **49.** Վառնա, **51.** Սահակ, **53.** Ջնդան, **54.** Պառնաս, **55.** Ծերունի, **56.** Վարդավառ, **56.** Մելիքյան:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ «Երեւանի հ. 4 արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ի, *«հրուշակագործ»* մասնագիտության արտադրական վարպետի եւ հայոց լեզվի եւ գրականության դասախոսի (22 դասաժամ) թափուր տեղերի համար:

Մրցույթը անց է կացվում մեկ փուլով՝ բանավոր առաջադրանքով, որի հարցաշարը կազմված է ՄԿՈՒԶԱԿ-ի մոդուլային ուսուցման հարցաշարից, որը հաստատված է ՀՀ ԿԳՍՄ նախարարի կողմից: Հարցաշարը կազմված է մեթոդ միավորման նախագահի եւ անդամների կողմից:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում «Ձեւ 1», մեկ լուսանկար 3X4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) կամ միջին մասնագիտական որակավորման փաստաթուղթ,*

*- Անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի 1-ին մասին համապատասխան՝*

*աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույքի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

***Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ օգոստոսի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի **16-ին՝ ժամը 14:00-ին,** «Երեւանի h4 արհեստագործական պետական ուսումնարան»-ում. հասցեն՝ ք. Երեւան Նոր-Նորքի 4-րդ զանգված, Գյուլիքեխվյան 20:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 63 40 70:

# Հայոց լեզվի թեստերի նոր առաջադրանքների պաշարների ստեղծման նպատակով առաջադրանքներ մշակող մասնագիտական խմբի ընտրության մրցույթի հայտարարություն

Գնահատման եւ թեստավորման կենտրոնը (այսուհետ՝ ԳԹԿ) նախաձեռնում է հայոց լեզվի պետական ավարտական եւ միասնական քննությունների թեստերի նոր առաջադրանքների պաշարներ ստեղծելու աշխատանքներ:

Նոր առաջադրանքների ստեղծումը թելադրված է պետական ավարտական եւ միասնական քննությունների թեստերի կառուցվածքային, ինչպես նաեւ առաջադրանքների ներկառուցվածքային եւ բովանդակային նախատեսվող փոփոխություններով: Այն նպատակ ունի թեստերը նոր պահանջներին եւ նոր չափորոշիչներին համապատասխանեցնելու եւ դրանց լեզվական նյութը թարմացնելու:

Պաշարների ստեղծման նպատակների իրագործումն ապահովելու համար նախատեսվում է.

*- ստեղծել առաջադրանքներ մշակող մասնագիտական խումբ,*

*- կազմել նոր պահանջներին համապատասխանող առաջադրանքներ,*

*- ծեւավորել եւ հրատարակել նոր առաջադրանքներից բաղկացած ժողովածուներ՝ որպես ուսումնաօժանդակ նյութ՝ պետական ավարտական եւ միասնական քննություններին նախապատրաստվելու համար:*

Վերը նշված աշխատանքներն իրականացնելու համար ԳԹԿ-ն հայտարարում է առաջադրանքներ գրող մասնագիտական խմբի մրցույթ:

Մրցույթին կարող են մասնակցել գիտակրթական հիմնարկների հայոց լեզվի մասնագետներ, մասնավորապես՝ բուհերի հայոց լեզվի դասախոսներ, հանրակրթական ուսումնական հաստատությունների հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչներ:

Մրցույթին մասնակցելու համար հայտ է ներկայացնում խմբի ղեկավարը:

Խմբի ղեկավարը՝

*- գրում է դիմում՝ ստորեւ ներկայացված նմուշին համապատասխան,*

*- դիմումին կցում է խմբի անդամների (քանակը՝ 4-6) ցուցակը,*

*- լրացնում է իր եւ խմբի անդամների համապատասխան տվյալները,*

*- ներկայացնում է թեստի 5 նմուշ՝ բաղկացած հայոց լեզվի հետեւյալ բովանդակային բաժիններն ընդգրկող 70-ական առաջադրանքներից՝ հնչյունաբանություն, բառագիտություն, ձեւաբանություն, շարահյուսություն, ոճագիտություն, կապակցված խոսք, ընդհանուր գիտելիքներ հայոց լեզվից (ԳԹԿ-ն պարտավորվում է որեւէ կերպ չօգտագործել չհաղթած խմբի կազմած առաջադրանքներից):*

Հայտ ներկայացնելու համար պարտադիր պայմաններն են համապատասխան բարձրագույն կրթությունը եւ նվազագույնը 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձը:

Նախապատվությունը տրվելու է մասնակիցների՝ գիտամանկավարժական կոչումներ եւ թեստային առաջադրանքներ կազմելու փորձ ունենալուն:

**Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2021 թ. օգոստոսի 25-ը:**

**Մրցույթի արդյունքներն ամփոփվում են մինչեւ 2021թ. օգոստոսի 31-ը: Հաղթող է ճանաչվում մեկ խումբ:**

Հաղթող խմբի ղեկավարի եւ անդամների հետ կնքվում են պայմանագրեր՝ աշխատանքի ծավալի, պայմանների եւ համապատասխան վճարման վերաբերյալ:

*Հաղթող խումբը աշխատանքներն սկսելու պահից կարող է հայտարարություն տալ խմբում չընդգրկված մասնագետներից լրացուցիչ առաջադրանքներ ընդունելու վերաբերյալ:*

Հայտը ներկայացնելու համար անհրաժեշտ է լրացնել ստորեւ ներկայացված տվյալները եւ ուղարկել հետեւյալ էլեկտրոնային հասցեին՝

**hayotslezu@atc.am:**

**Գնահատման եւ թեստավորման կենտրոն**

*Դիմող՝*

*հասցե՝*

*հեռախոս՝*

*Էլ. փոստ՝*

**Դիմում**

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցելու հայոց լեզվից թեստային առաջադրանքներ կազմող խմբի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ տվյալներ՝ իմ եւ խմբի անդամների աշխատանքային փորձի եւ կրթության մասին եւ թեստի 5 նմուշ՝ ներկայացված պահանջներին համապատասխան:




## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի N1 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի *«Կարի արտադրության տեխնոլոգիա»*, *«Տրանսպորտային միջոցների շահագործում եւ նորոգում»*, *«Խոհարարական գործ»* մասնագիտությունների գծով արտադրական ուսուցման վարպետների թափուր տեղերի համար՝ մեկ աշխատադրույքի չափով:

Մրցույթը անց է կացվում մեկ փուլով՝ բանավոր առաջադրանքով, որի հարցաշարը կազմված է ՄԿՈՒԶԱԿ-ի տվյալ մասնագիտության մոդուլային ուսուցման հարցաշարից, որը հաստատված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում «Ձեւ 1», մեկ լուսանկար 3X4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) կամ միջին մասնագիտական որակավորման փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույքի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

***Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ օգոստոսի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի **16-ին՝ ժամը 12:00-ին,** Երեւանի N 1 արհեստագործական պետական ուսումնարանում. հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 65:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 44 37 01, (055) 32 46 76:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի N1 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի *«Ֆիզիկա»* (6 ժամ), *«Ինֆորմատիկա»* (21 ժամ) առարկաների դասախոսների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում «Ձեւ 1», մեկ լուսանկար 3X4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) կամ միջին մասնագիտական որակավորման փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույքի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

***Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ օգոստոսի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի **16-ին՝ ժամը 12:00-ին,** Երեւանի N 1 արհեստագործական պետական ուսումնարանում. հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 65:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 44 37 01, (055) 32 46 76:

«Կրթություն» շաբաթաթերթ բաժանորդագրվելու համար դիմեք մոտակա փոստային բաժանմունքներին:

ISSN 1829-2593
9 771829 259108 21010 >

ՀԻՄՆԱԴԻՐ՝
ՀՀ ԿԳՄՍՆ
««Կրթություն» թերթի խմբագրություն» ՓԲԸ

Գրանցման վկայական՝ 01Ա-049349,
Տրված է՝ 11.01.2001թ.
Դասիչ՝ 69312,
Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 67,
E-mail: krtutun@yandex.ru
Հեռ. (043) 57 49 56, (043) 57 49 51

Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում: Չպատվիրված հոդվածների համար հոնորար չի վճարվում:
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը պարտադիր է:

Տպագրված է «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» հրատարակչության տպարանում:
Տպաքանակը՝ 2000:
Ծավալը՝ 6 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 27.07.2021թ.
Գինը՝ 400 դրամ:

Համարի պատասխանատու՝

Գլխավոր խմբագիր՝
Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ